ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՀԱՅՕՒԼ

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

BESTELLT
18.3.96
21-12 V

ՀԱՅՐԵՆԻՔ

1890

ԹԻՒ 5 ՄԱՐՏ 1

ԽՄԲԱԳԻՐ՝ ՏՆՕՐԷՆ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՉՄԻՒՐՆԻԱ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՏԸ 129
ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ Ի ԳԱՀԻՐԷ (Օսիրիս) 1
ԱՆԱՊԱՏ ՍԵՒԱՆԱՑ . . . . . .
ՄԻՐՈՑ ՕՐԻՆԱԳԻՐՔԸ (Գ. Խօրասանճեան) 143
ԲՆԱԽՈՐՈՒԹԻՒՆ 146
ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ՏՈՒՏՈՒ ԹԱՓԹԱՓԵԱՆ . (Մ. Ն.) . 14
ԿԻՐԱԿՆՕՐԱՑ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ (* * *) . . . 150
ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ (Շահնուր) 151
ԳՐԱԿԱՆ ԶՐՈՑՑՆԵՐ (Ապրամ) 155
ԳԱԻԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՇՈՒՐՋԸ (Սիսակ) . . . 159
ԻՄ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԿԻՆՍ (Յաւելուած Ա, Մ՚ոջ)

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Թէև խմբագրութիւնս իր Յունվար 15 (Թիւ 2) Ա. Մ՚ոջ մէջ յայտարարած էր որ իր կ. Պոլսոյ գործակալութիւնն դադրեցուցած էր Պէրպէրեան էֆէնտիի հրաժարումէն, սակայն Մեծ. Տիգրան էֆ. Ձիվէլէկեանի սիրայօժար առաջարկն՝ յիշեալ գործակալութիւնն ստանձնելու համար՝ խմբագրութիւնս չնորհակալութեամբ ընդունելով՝ այս յայտարարութեամբ կ՚ծանուցանէ կ. Պոլսոյ մերայնոց, որ՝ կրնան նաև դիմիլ Ձէէ֊ֆէնտի Շուէէյեէ Պատ. խմբագրատեղ՝ Ձիվէլէկեան Տիգրան էֆէնտիի գրատունը, Պոյը֊Ալէ Ձ՚ոփոէխ Թէ֊ 20 և Ա. Մ՚ոջ բաժանորդ գրուիլ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ՍԻՄՐԻՍԱՐԵԱՆ ԵՒ ԸՆԿՔ

ՄԵԾ ՀԱՅԵՑԱԾՈՑՔՆ

Այն համբաւաւոր վաճառատունն՝ ուր կը ծախուին ջան բամպակեղէն, բրդեղէն, մետաքսեղէն նիւթեր, վաղուց կը վայելէ ոչ միայն Իզմիրի ամեն հասարակութեանց համարումն, այլ և իր բոլոր պատասխան յաճախորդներուն վստահութիւնը որ սրտէն քաջ դնահատած են իր ազնուական ընարութեան, տոկունութեան, լաւ թեան, չափերու ճշտութեան և գիներու անհամեմատ չափաւորութեան զգալի առաւելութիւններն, այնպէս որ միշտ զոհ մնացած և ասոր վաճառատունը պատուած են իրենց յանձնարարութեամբ։ Ինչպէս ցարդ նոյնպէս և այսուհետև Սիմբիսարեան վաճառատունն պատրաստ է միևնոյն գիտութիւններն ընծայել տեղւոյս յաճախորդներուն, և յատկապէս պատասխանոց ուշադրութիւնը կը հրաւիրէ վերոյիշեալ առաւելութեանց վրայ։ Պատրին վստահ լինիլ թէ իրենց յանձնարարութիւններն գրով կամ պրծակատարներու միջնորդութեամբ, ամենայն ճշտութեամբ ու փութով պիտի կատարուին։ Անտարակոյս գտնուացի և տեղացի նոր յաճախորդներ պիտի փութան, անձամբ գիմելով փորձել, ապրանաց գերազանցութիւն, Սիմբիսարեան ընդարձակ մթերանոցներու մէջ՝ որ կը գտնուին՝

Այժ – Եւրոնի Կալամակի փողոցին մեջ Վեհիր խանի առջեւ։

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՏԻՕԵՆԻՍ

(GRANDS MAGASINS DIOGENIS)

Սկսած է և պիտի շարունակուի մեր **ՄԵԾ ՎԱՃԱՌԱՀԱՆԴԷՍԸ** *որ կը բաղկանայ հետեւեալ առարկաներէն.*

ԲՐԴԵՂԷՆ կրկնածալ, միագոյն ու ֆանթեզի, Ասորաքա, պէժ, Սևեզէն չատ տեսակներով և չատ ուրիշ տեսակ բրդեղէններ.

ՄԵՏԱՔՍԵՂԷՆ գունազարդ ու միագոյն, Սիւրահ, Թաւիշ, Բլիւշ, Քամոլէօն, եւն.

ԳՈՒԼՊԱՁ, ամէն տեսակ, երկու սեռէ ամէն հասակի համար, Բրդէ կրծկալներ արանց և կանանց համար, Անձրևանոցներ, Ձդ սիեժէ ոտնամաններ, Անջրանցոյցներ, և այլն.

ԱՄՈՒԵՂԷՆ, Անգլիական և Ֆրանսական արտադրութիւնք.

ԱՐԱՆՑ համար չապիկներ, ճերմակ ու գունաւոր, Վզնոցներ, Թևնոցներ, Փողկապներ, եւն.

Հասեղէն, Ձամպայոյցներ, Կօշիկներ և ՄԱՆՐԱՄՈՒՆՐՆԵՐու իրապէս անվերջ բաժին մը.

ԿԱՐԱՍԻՆՆԵՐՈՒ գործատուն — աժան գիներ —.

ԻՍԿ մեր չրջագ. Հատներու և գլխարկներու սենեակը բելէյկ-ընեանց և ընաղանդ-ընեանց հաւաքածու մը կը ներկայացնէ.

ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐ — ԿԱՆԽԻԿ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Օ. ՊԱԼԳԱԶԱՐ

Ի ԼՈՆԴՈՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ, յանձնարարութիւն կ'ընդունի Լոնդոնի հրապարակին վրայ վաճառելու հնութեան վերաբերեալ զանազան նիւթեր, պրամ, քար, զարդեղէն կամ դործածական առարկայ, ձեռագիր կամ տպեալ դիրք, նկար, նամակագրում եւն։

Պայմանները՝ օրակի և քանակի համեմատ կը տարբերին և կանխաւ թղթակցութեամբ կ'որոշուին։

Կատարեալ ճշդութիւն, կարևոր գործողութեանց առթիւ երաշխաւորութիւն։

Հասցէ

O. BALTAZAR 55, Wharton Road West Kensington LONDON W.

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ԱՍՈՒԵՂԷՆԻ
Պ. ԱՐԱՄԱՊԱՏԱՆ

Ջուխա Պէյօղլին

Մեծաքանակ և մանրաքանակ վաճառում

Աբանոյ համար

ՐՈՒՆ

Ֆրանսական և Անգլիական տպչիներու

Տեսակի ճոխ պաշտպանութիւնն

ԿԵՆՍԱԳԻՏԵՒՆ

Մեծաքանակ գնողներու համար գոհացուցիչ պայմաններ և բացառիկ զեղչ։

Գաւառներէն ապսպրանքները վարձով ու ճշտութեամբ կը պատրաստուին։

ԳԷՈՐԳ Մ. ՔԷՉԻՃԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԳԵՐԶԱԿԻ

Գ.արա–Օսման–Օղլու խան, վերի յարկ, ՌՒ– 10–11

Ամեն տեսակ բուրդեղէն քազմիրներու, արաջց համար

Պատիւ ունի ծանուցանել Սրզոյ յաճախորդաց թէ՛ իր վաճառատունը այժմ փոխադրած ըլլալով, Գ.արա–Օսման–Օղլու խանին մէջ ՌԻ 10–11 մաղազաները, որոշած է խիստ զոհացուցիչ դիներով, ապահովանքներ ընդունիլ հագուստներու համար, այս պատճառաւ իր արամադրութեան տակ ունի նաև վարպետ ճեւող մի դերձակ, և միանգամայն պատրաստի ամեն տեսակ կարուած հագուստներ պիտի պահուի իր վաճառատան մէջ թէ՛ մեծաքանակ և թէ՛ մեծաքանակ վաճառելու համար. Յոյզ մի անգամ դիմէ՛ պատիւ յաճախորդը. անտարակոյս իր պրպանը և միանգամայն ճաշակը գոհացընելով պիտի ունենի իր վաճառատունէն։

Ուստի կը խնդրէ որ անգամ մը դիմուի իր վաճառատունը և յայնժամ փորձով պիտի տեսնուի ինչ որ կը խոստացուի սոյն յայտարարութեամբ։

ՄՐՑՈՒՄ ԵՒՐՈՊԱՆ ՊԱՏՐԱՍՏԻ ՎԱՃԱՌՈՂՆԵՐՈՒ ՀԱՏ.

1—6

Կը–լ՛ էհ Մահմուտքէը, — (Վարդը և իր բերքը) հեղինակ ՅԱՒՈՐ ՋԱՔԱՐԵԱՆ, երկրագործական քննիչ Սյաբնի նահանգին, գին 6 դրուշ։

Ծաքուճ Հայ պառնէյ. — գրեց ՏՕԲ. Ն. ՏԱՂԱԻՈՐԵԱՆ տպագր. Վիէննա Մխիթարեան տպարան 1895, գին 2 ֆրանք, կեդրոնատեղին Վիէննա Մխիթարեանց Վանքն, Թիֆլիզ կեդրոնական Գրավաճառանոցն։

Ա՜յնէտ քառաֆէյէ Հայերէնէ Գաղէրէն. — յօրինեց ԿՈՄԻՏԱՍ Ա. ՈՍԿԵԱՆ, Բ. տպագրութիւն. — հրատարակիչ և տպագրիչ Յ. Մատթէոսեան կ. Պոլիս, գին 25 դրուշ։

ԹԻՒ 5 1 ՄԱՐՏ 1896

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՏԸ

Տարակոյս չկայ որ ամեն ժամանակ և ամեն ազգի մէջ կրօնքը գերակշիռ ներգործութիւն ունեցած է և ունի մարդկային ճակատագրի վրայ։ Վայրենին իր յուռթին, կռապաշտն իր աջանին, քրիստոնեային իր պատկերին առջև մի և նոյն գերբնական զօրութիւնն, տարբեր հասկացողութեամբ այլ մի և նոյն նպատակաւ կ'պաշտեն։ Ագեթա, նուէր, ոսկեկէզ, պատարագ, ծէս, արարողութիւն այլակերպ պաշտամանց համիմնատ ձևակերպութիւններ են, բոլորին չարժառիթն համոզման, այս է՝ ընդունիլ ու խոստովանիլ երկրպագութեամբ որ գոն գմարդը վեհագոյն էակ մը կայ մերմէ ահարկու, ամենազօր ու վերժնգիր, մերմէ գիմաս, բարի ու ծնդրակա-

տար, և այդ էակին հավանատրութեան չնորհը հայցել։ Անտաշ քնապղն, բուռն կիրքը, ղատա բանականու թիւնն ընծայած են այդ էակին այլազան ատարպերներ, որոց աղբիւրներն յաջորդարար եղած են բնաւթեան պարտութիւնները, մարդկային երևակայութեան թուիչները, իմացականութեան մոռացկանութիւնները։

Քանի որ այդ այլազան կրօնից հիմն նոյնն է, քանի որ կարելի չէ անկրօն մարդկութիւն մ'երևակայել, միթէ հնարը չհայ այդ ամէն կրօնական հիմնարկութիւններն իրենց պարզագոյն ձևին վերածելով՝ ընդհանուր մարդկութեան համար մէկ հասկ ճշմարիտ կրօն մը ձուլել։ Այն ինչ հնարին է, պիտի ըսուի, և ընդհանուր կրօնի մը հիմնարկութիւնն ևս անհնարին չպիտի լինեը եթէ մարդկութիւնն ևս մի և նոյն պիրքն, մի և նոյն հոգին, մի և նոյն միտքն ու բարքն ունենար, վասն զի ոչ միայն այժմեան կրօններն՝ մէն մի ժողովրդեան բնաւթեան ումիջավայրի արդիւնք, կ'բաժնեն մեծ ազգեր, լուսամիտ ազգեր այլև կը բաժնեն մարդկային ցեղեր, հասարակութիւններ, անհատներ, այնպէս որ բաց ի կրօնական երեք չորս գլխաւոր դաւանութիւններէ որ կ'ամփոփեն մարդկութիւնն, կան նաև անթիւ ազանդներ, հատատալիքներ, և համանման ազանդներու մէջ արտաքին կամ ներքին զանազանութիւններ, որ բաղդատելի կրօնական միութեան մըտատիպարն կարելիութեան սահմանէն կ'վանեն և ոնաբջներու կարգը կ'դասեն, հակառակ այն փորձերուն որով կրօնագէտ ու դէնագէտ, իրենց դաւանութիւնն քան ամէնն բանաւոր ու ճշմարիտ նկատելով, իրենց թևին ներքև կ'հրաւիրեն տարակրօն ժողովուրդներ և կ'խոստանան անոնց առջև բանալ հոգւոյ փրկութեան և երանութեան դուռները։ Թէ որքան դժուարին, ո՛րքան անբանաւոր են այդ փորձերն, որքան մտացածին են ու խարուսիկ են այդ խոստումներն ատեղծող է մեկնել, քանի որ իրողութիւններ ակներև կ'հաստատեն որ մի և նոյն Աստուածն և կրօնի մի և նոյն հիմնադիրը պաշտող համադէն ժողովուրդներ, շատ անգամ, երբ աշխարհա-

յին անձուկ շահեր կ'խօսին, անզգայութեան ու անտարբերութեան մէջ ապաւէն կ'փնտռեն՝ ի բաց թողլով ազգին բարոյական ու կրօնական նկատումներ։ Ի բնէն եթէ միակերպ մարդկութիւն, միակերպ լեզու, կրօն, միակերպ կենցաղավարութիւն ու կառավարութիւն կարելի իրագործութեանց կարգէն չեն, պարտ է մարդկային բնութեան, իր աշխարհագրական կացութեան, իր ինքնակառնութեան ու բարուց մէջ փնտռել այս այլայլութեան պատճառները և եզրակացնել թէ Աստուծոյ մտաքը կայ այն տարակերպ կարգադրութեան մէջ, որ տեղւոյթեան ապօրէն և ինքնատիպութեան չատ օրինաւոր կ'երևի։ Վասն զի այն մտան որ կարող էր ամենքիս դրութեան մի անգամ ընդ միշտ տալ ինչ որ անհուն տարբերութ հոգւովմամբ առատած է, էատիւն, չարժատ, ձև, կենդանութիւն, կարող էր նաև մարդկութեան տալ միահամուռ և անմիջապէս ինչ որ հոգիս անթաւ տարբերութ ընթացքին մէջ առանձալ կ'երևի՝ լեզուական, ընկերային, կրօնական ու վարչային միճակ մ'որ գեռևս անբնդհատ զարգացման ըօրութեամբ պիտի յաջողի մեծագոյն համամակութեան կամ ղերագոյն կազմակերպութեան հասնիլ։

Եւ սակայն կարգ մ'ինքնատեսիլներ ու մարգատեսներ մարդկային ամեն գաւառական հիմնարկութիւնները փոխելէն՝ ժամանակի պահանջ ունենալու համեմատ, կամ վազանցած՝ անհիմն բաներ համարելով, Աստուածութեան և հոգւոյ բնազանցական գաւառները լծած աստուածաբաններուն պէս՝ կ'աշխատին՝ բարելրկութեան օրինաց վրայ յենած, այնպիսի աշխարհ մ'ուր գժտարին է անանց հետևիլ, աշխարհ մ'որու հեռատար ապագային մէջ կ'ըմդնդարեն մարդկութեան մի և նոյն կրօնն, ուր կ'երազեն արդարութեան ու ճշմարտութեան տիրապետութիւնն, ուր վերջապէս ծայրագոյն բարօրութեան վը ծոլան մէջ կ'լողան։

Երանի՛ այնպիսիներուն որ խնդայականութեամբ ու հեռատեսութեամբ աւելի բարձր են քան մեզ պէս ո-

զօրվելի մահկանացուներ, և այդ երանելիներուն ծոյն ոչ միայն ընդհանուր ներքայրակցութեան սխալական ամէն կրօնի վեհ հոգիներ, լոկ հոգիներ կ՚ողջունուին, որ ինչպէս Շիքագոյի աշխարհանդէսին մէջ խաչով խաչով բառերով, միայն բառերով, ցոյց տուին իրենց վեհութիւնն, այլ և կ՚ողջունուին ատատուածեանները, նիւթապաշտները, դրապաշտները։ Այս վերջիններուն մէջ առաջին կարգը կ՚ըլլանէ Օ. Գանդ, որ իր մի նշանաւոր գործին մէջ Մոզէս-Ըեն կոչէ հիմերն ու պաշտամունքը կ՚գնէ, չքեզ և վսեմ հիմնարկութիւն մ՚որ արդարև ցարդ անգործադրելի լինելու չափ խորունկ է։ Իր գլխոյին գանազան աշակերտներուն մէջ նշանակութեան արժանի է Պ. Ֆ. Հէրրիսըն, որ տարին մի անգամ պաշտօն ատանձնած է դրագէտներու ժողովի մը մէջ վարպետին դրական վարդապետութեան գանազան կէտերը բացատրել և մերթ ընդ մերթ մարդկային ազգ ազ կրօնին հիմնական գաւանանքը չօշափել մանաւոր դրուածներուն մէջ։

Եւ ի՞նչ են այդ կրօնին հիմերն բնաւ՝ Գնդման, Ընդլեան, Ամերիկեան և ուրիշ դաս մը կրօնագէտ իրենց խառնածին հատատոյ մը հիմնները չեն իր քարոզած սկզբունքըն, այլ պարզապէս մարդկային անընդհատ յառաջդիմութենէ ծագելիք բարոյական, իմացական և գիտական ճշմարտութեանց վրայ դրուած չէնք մը կ՚կանգնէ, որ առ այժմ իր երևակայութեան մէջ բնակելի նկատ բազ իր մ՚ունի։

Թերևս ընթերցողն հետաքրքրի իմանալ այդ մարդկութեան կրօնին էական գլխերն, ուստի պիտի չանանք զանոնք ամփոփել։

(Շարունակելի)

ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ Ի ԳԱՀԻՐԷ

Նորութիւն մը չէ ցուցահանդէսը մանաւանդ Եգիպտոսի համար, ուր հնէաբոյժներու և խորհուրդներու այս երկրին որու դեղեցկերտ կտորը, մեծագին անօթները և ճոխ կերպարանները ամենէն չահեկան նմոյշները կ'կազմէին քրիստոնէական թուականէն երկու դար առաջ Պտղոմէոս Արուեստասէրի հանդիսաւոր ցուցադրութիւններուն։ Սույդ է որ վաղնջական դարերու այս անսեմեռեմ ցուցահանդէսները չատ սահմանափակ դեր մը կ'կատարէին՝ միակ նպատակ ունենալով դիւրութիւն տալու թանգարաններու ապրանքներուն հրապարակային ցուցադրութեան և վաճառումին։ Սակայն դարուս կեսէն ի վեր, յորմէ հետէ չոգին և ելեքտրականութիւնն ուժի և արագութեան այդ գոյդ մը սիրտաններդը, միանալով նախնի ճարտարութեան և դեղարուեստներուն՝ եկան հասան դարավերջի յարարերական կատարելագործութեան, ցուցադրութիւնները աւելի ընդարձակ դեր մը սուսյան և մարդկային գործունէութեան զանազան ճիւղերուն օրըստօրէ սիրտ ընդլայնմանը հաւնեստ՝ ժողովուրդներու մէջ մրցումի յոյնարձակ ասպարէզ բանալով պատճառ եղան դիտութեան, երկրագործութեան, ճարտարութեան և առեւտրի չոհավաճառութեան զարդացումին։

Այսպէս քաղաքակիրթ երկիրներու համար օգտաւէտ սովորութիւն կ'դառնայ՝ որոշ ժամանակամիջոցներու մէջ՝ պարբերարար բնիկ–ցեղային և ընդհանուր մարդկութեան զարգացումի աստիճանաչափը նշանակել համաչխարհային արուեստահանդէսներով, իրր մէկն մի հանդրուան գիտութեան և ճարտարութեան առաջ ճամրուն։ Նե երբ մի կողմէն մարդկային ինչուառութիւնը մեղմելու աղնիւ ձգտումով՝ ընկերային, տնտեսական, կրթական, բարոյական և այլ կենսական խնդիրներ լուծելու կ'ջրաչին համաժողովներ և աղերու բարօրութիւնը յարդ արելու ջանքեր կ'ընեն, միւս կողմէ դիտութիւնը նորահնար գիւտերով հսկայ քայլեր կ'առնէ դէպի այդ բարօրութիւնը տանող ճամրուն վրայ, Հին և Նոր աշխարհներ գալիքի նախանձախնդրութեամբ՝ մին քան միւսը զերազանց արուես-

առանդները կազմակերպելու հսկայական ձեռնարկներ կ'ընեն՝ բոլանդակ աշխարհի հետաքրքրությունը գրաւելով. Փա իզ, Շիքագո, Ալանէյ, Անվերս և այլ լուսաշատ կեդրոններ ճառագայթարձակ կ'ըլլան և աշխարհիս չորս ծայրերէն ի հանդէս կ'երթեն պիտանի և ճարտարարուեստի հրաշալիքները, այսպէս մշակելով ազգերու յարաբերութիւնները, ամրապնդելով եղբայրակցութեան կապերը և զարգացնելով համերաշխութեան ոգին։

Բնական է որ Եգիպտոս անհամեմատ չնչին յառաջդիմութեան այս ընդհանուր շարժումին և իրը փիւնիկ վեր կենցաղելով իր հնագոյնեան ամիւններէն՝ քաղաքակիրթ երկիրներու շարքին մէջ դրաւէր վայրկեան դիրք մը որ պատուաբեր է ըլլալի դերիվեան աչքութեան նայելէն և բնիկ կառավարութեան։ Ընդունինք որ դեռ չատ տարիներու կ'կարօտի Եգիպտոս՝ հասնելու համար լուսաւորութեան այն մակարդակին ուր բարձրացած են արդէն եւրոպական երկիրները, սակայն իր վաղեմի փառքին վերածնումը աւետող արշալոյսը ծագած է արդէն և քաղաքակրթութեան ու յառաջդիմութեան բոլոր տարրերը կ'պարունակէ իր մէջ, մանաւանդ իսկապէս հաղագործական երկիր և հաղագործ ժողովուրդի հայրենիք՝ իր բնական անթաւ արտադրութիւններով, արդասաբեր հողով և կենսատարգև ներգոսով օր օրի իրեն կ'ձգէ աշխարհի ամեն կողմերէն հոսանք մը տարաշխէղ և տարաբեղուղ գաղթականներու որոնք բնիկ տարրին անխառնջ աշխատութեան միացնելով իրենց ճարտարական և արհեստագիտական յատկութիւնները՝ մեծապէս կ'նպաստեն երկրին հարստութեան և բարգաւաճումին և կ'պատրաստեն յաւասիկ ապագայ։

Եւ նոյն ինքն Եգիպտական կառավարութիւնն է որ ամենէն աւելի սատար կ'հանդիսանայ երկրին յարատև զարգացման՝ մի կողմէն մեծամեծ գումարներ յատկացնելով ամեն կարգի հանրօգուտ ձեռնարկներու, մէս կողմէն քաջալերելով բնիկ ճարտար արուեստները, երկրագործութիւնը, առեւտրին արհեստագործութիւնը, ընձեռելով պարունէութեան և մրցումի ազատ միջոցներ, կազմակերպելով նկարահանդէսներ և ցուցահանդէսներ որոնք՝ առանց տարաշխարհիկ արտադրութիւններու մասնակցութեան՝ գրգիռ կ'ըլլան ծագեցնելու ձեռներէցութեան ոգին հետ աւելական արհեստաներն և ճարտարութիւնը։

1894 ին էր որ տեղի կ'ունենար Եգիպտական առաջին ցու-

ցահանգիստը Աղեքսանդրիոյ մէջ և միայնոյն յաջողութեամբ կը պահպանէր, թէև ցուցադիրներու ցանցառ թիւն կ'ղգացուէր որ ցուցահանգիստի գաղափարը՝ իրեւս իրր նորութիւն մը՝ գէպ ալ ունէր հասունանալու, և շատ ու լաւ հասունցաւ այն, վասն զի ինչ որ այն առաջին յանդգնութիւն մը կ'կարծուէր՝ միամուռեցաւ բեղուն գաղափարի մը որու կ'պարտինք ներկայ ծաղկեայ ցուցահանգիստը ինչպէս և ապագաները։ 1896 ի Կարգադիր Մասնախումբը, որու կ'անդ ամակցին պաշտօնական և անպաշտօն երեսելի անձնաւորութիւններ՝ բարձր խոհի հովանաւորութեան ներքև, իր կազմութեամբն իսկ յաջողութեան մեծագոյն գրաւականը կ'ընծայէր և կ'ապահովցնէր իր առաջին մէջ բոլորովին նոր գաղափարի ըլ՝ այն է Պոլսոյ պանական ցուցահանդէսի մը (Exposition Horticole) իրագործումն որու ա'չ ոք կ'նաւատար մինչև Յունվար 25 ի օրը՝ երբ էզգիքիւլի պարտէզը՝ երկու երեք ամսուան խուռ և անդադար գործունէութեան մը յետոյ յեղակարծ և իրր հրաշքով մը փանդոնայն բուրաստանի, թաւուտքի, բանջարանոցի և մրգատունի վերածուած՝ կ'բանար իր դուռները և անակնկալ բոլոր պիւիկ հրապոյրները կ'պարզէր հիացող հասարակութեան առջև։ Արտաքին նկարակերտ կտաւէ ընդարձակ վրաններ չուրջանակի կ'բոլորեն կեդրոնական սրահը, ուր մի սազաւարի մուտքը կրելով խորհրդաւոր նշանակ մը որ ցոյց կուտայ ի տես գրուած բուսեղէններու հաւաքական տեսակն, պտուղներու բաժին, բանջարեղէններու բաժին, զարդատունկերու բաժին, ծաղիկներու բաժին, եւն։

Բարձր, խոհ Ապտոս փաշա՝ իր սովորական ճշտապահութեամբ՝ որոշեալ ժամուն պալատական հանդերձներով կ'հասնի էզգիքիւ պարտէզին արևմտեան դուռը ուր արժանավայել մեծարանքներով կ'ընդունուի խոհական ընտանիքին, Մասնախումբի անդամներուն, նախարարներու և հիւպատոսներու կողմէ և կ'առաջնորդուի յատկապէս պատրաստուած վրանի մը մէջ, ուրկէ առաջարներու բոլորակ շարքին երկու ծայրերէն արտաքին և անդրնական նստատեղերը խոհական քայլերդը և կօ ւեվ ը ւ՝ իր մագմանը ոչխիկն Նորին Բարձրութիւնը ժամու մը չափ կ'շրջի առաջարները, հետաքրքրութեամբ աչքէ կ'անցունէ իր երկրին և հպատակներուն արտադրած բուսական սքանչելիքները, կ'նահատակ բնիկ պարտիզպաններու և եւրոպացի ա-

բուեստագէտներու դնելիագիտական ճաշակը և ձեռարուեստական ճարտարութիւնը, և դուհուներ ու զուարթ ժպիտով մը իր ընորհակալութիւնն ու ընորհաւորութիւններն յայտնելով կարյապիր Մատնախմբի անդամներուն՝ միևնոյն հանդիսաւոր գնացքով կ'ետևի իր հետևորդներուն հետ, մինչդեռ երկուսեռ հատարակութիւնը խուռն բազմութեամբ՝ մուտքի մէկ ֆրանքը վճարելով՝ ներս կ'խուժէ և վրաններու տակ կ'ցաղվէ երկարաձիգ թափորի անվերջ և անդադար տոզանց մը։

Առաջին տարուրութիւնը պիր կ'ունենայ այցելուն՝ անուշ պատրանք մ'է իրր թէ աչխարհի հինգ մասերը միացումի եւած ըլլային իրարու հետ՝ այս ակնախտիպ տօնախմբութեան դրկելով իրենց բազմատեսակ տաճմականները և բուսական ցեղին բոլոր ներկայացուցիչները, թէև իրապէս փարատաններու երկիրն է որ իր բազմաբեղուն արգանդէն մատակարարած է բուսականութեան այս անհուն պանդխտութիւնը։ Մինչդեռ աչխարհի մէկ մասը ձիւնախառնուտ ապիտակութեան տակ թաղուած՝ բնութեան ցրտահարուտ մերկութիւնը կ'պիտէ, Եգիպտոսի ջերմին և կենսատու արևը, պապչ կլիման և Նեղոսի ափանց յուռթի և արգաւանդ հողը՝ լիուլի կ'պարգևեն հոս ուռճացիր բուսականութեան մը բոլոր հրապոյրները վայելելու համարձակ, բևեռային ազգերուն ցարտասիէն սկսեալ մինչև հասարակածային հակայարեւ հիւթեղ արմաւենիները և պտերները, պամելեաներէն սկսեալ մինչև փռալը (Եգիպտական բակլայ), հիացումի և հրճուանքի խառն զգացումներ ազդելով միանգամայն բնութեան սիրահարներու և գիտուհասած վարիչներուն։

Այցելուներուն թափորը իր առաջին այցելութիւնը կուտայ այն տաղաւարին որ յատկացուած է պտուղներու ցուցադրութեան, ճշմարիտ մրգանանոց մը։ Հոս, ինչպէս նաև միւս բոլոր բաժիններու մէջ, ակնյայտ կ'երևի անժխտելի գեղագիտական ճաշակը Կարդապիր Մատնախմբին և ցուցադիրներուն՝ որոնք ներգաշնակ և ընորհալի կարգով մը կատարած են բուսական արտադրութիւններու դասակարգումը։ Երկայնաչար և սպիտակ սփռոցով ծածկուած սեղաններու վրայ կ'փռայի ախորժագրգիռ և հեշտանամ միրգերու անհուն պիսակութիւն մը՝ գունագեղ և բարմաչուտ սեխ, ձմերուկ, խաղող, նուշ, ելակ, ոսկեփայլ նարինջ և մանտարին՝ ամեն խոշորութեամբ և ամեն տեսակներով, դեղնորակ և հնդիկ պտանի հակայ ողկոյզներ՝ քաղցրահամ և անուշահոտ, արմաւի բազմագան նմոյշներ, անանաս

սերկևիլ, խնձոր, տանձ, ծիրան՝ բոլորն ընտիր տեսակէ։ Միջերու բաժնին մէջ տատանին ուշադրութիւն դրաւելու հանգամանք մ'ունէին սրճենի մը՝ կանաչորակ և թարմ հատիկներով ակաղնուն, և ապակեայ դարանի մը մէջ դրուած բամպակենի մը՝ իր երեք ձևափոխութիւններով, այն է բժիժներով ծանրաբեռնուած բունը, կրկիզաւոր բամպակը և մաքրուածը՝ միւնափայլ։

Երկրորդ վրանը՝ ընդարձակ և երկայնաձիգ՝ յատկացուած է բանջարեղէններուն, որոց քանակն ու որակը ա՛նքան չատ է որ կարելի չէ մի առ մի աչքէ անցունել, ինչ որ ամբողջ ժամու մը կ'կարօտի, ուստի հարևանցի ակնարկ մը նետել ու անցնիլ բաւական է այս օգտակար տունկերուն վրայ՝ որոնց դլխաւոր ներկայացուցիչները հետզհետէ կ'հանդիպին մարդկոտ այցելուի աչքերուն. կալամբ՝ իր հսկայ և գաճաճ տեսակներով, ընդ ակալամբ՝ խոշոր ու մսոքր տեսակներով, Պրիւքսէլի վեհխարի կալամբ, չղջամ, բանճար, սպրաս, սպասընջան, լոլիկ (թօմաթ), պամիւ, կանկար, սոխ, սխտոր, չամին, բողկ, տունկ, դդում, բակլայ, լախտոր, ազգան, ոլոռ, ծնեբեկ, աղաքեղ, թարմ լուբիա, գետնախնձոր, գետնատանձ, եւ Մասնաւոր յիշատակութեան արժանի է Լէտի Բրօմէրի ցուցադրած քառակուսի մի թաղարը՝ որու մէջ ցանուած մանանեխի հատիկները ծիլ արձակելով՝ սիրուն և վեհապետական տերևիկներու կանաչ շաղախատուփի մը ակնապարար տեսիլը կ'նկարէին։

Ջարդատուներու բաժինը դրաւած է երեք ընդարձակ տաղաւարներ որոնք ստուերախիտ և հովատուն թաւուտքի մը մանրանկարը կ'յօրինեն, մեծ թաղարներու մէջ տնկուած լայնատերև արմաւենիներ, արևադարձային չքեղ թուփեր, սիրուն ծառատունկեր, սալօնի և պերճ սենեակներու յատուկ զարդաբոյսեր՝ որոց մեծագոյն մասը Հիւսէին Ֆամէլ փաշայի (քեռի Բարձր. Խեդիվին և նախադահ կարգադիր Մասնախմբին) պարտէզէն փոխադրուած և ի ցոյց դրուած էին. այս և միւս բաժիններու՝ մանաւանդ ծապիկներու՝ մէջ ունեցած բազմաթիւ ճաշակաւոր նմոյշները անդամ մը ևս հաստատեցին մեզ Հիւսէին փաշա սիրոյ մ'է մշակութեան և պարտիզպանութեան, ինչ որ արժանի բրաւ զինք ցուցադրիներուն մէջ առաջին մրցանակըն ստանալու։

Անակնկալներու անակնկալն վերապահուած է ծապիկներու բաժնին մէջ որոնց ցուցադրութեան սահմանուած են երեք ըս-

քեզ տաղաւարներ։ Բուրաստան՝ բուն բառը չէ որ կարող ըլլայ որակել ու սահմանել այս խնկահոտ եղեմը, որքարան մ'է որու սեմէն ներս մարդ ակամայ կ'համակուի ինքնամիտի և պատկառոտ երկիւղածութեամբ. ամբողջ աշխարհ մ'է խորհուրդներու, զգացումներու և սէրի որ մէն մի ծաղկին տուած է իր լեզուին և ձայնին բոլոր խմաստներն ու չնչառը։ Ջերմոցներու մէջ մշակուած դալկահար և կենսագիրկ ծաղիկներու համախումբը չէ որ կ'կազմէ այս Աւետնը, այլ ազատ օդի և լոյսի դէմ՝ արեգնաւէտ մարմանդներու մէջ կենսալի ամուսով հասած ուռճացած ծաղիկներ՝ գունագեղ և բուրումնաւէտ, որոնք իրենց հոտը կ'սփռեն արդէն անօրինակելի բոյրով խտացած միջավայրին մէջ, ամենն ալ թարմ իրենց բունին վրայ կամ նոր կարուած բունէն, ամենն ալ թոյրով ու բոյրով առի ու ամենն ալ հեշտագրգիռ։ Գեղեցիկներու գեղեցիկն, ծաղիկներու ծաղիկն, վարդը վառ երանգներով իր պսակը կ'պարզէ. սեղանի զարդ մը կ'ներկայէ բոլորովին վարդէ ու տերևներէ չինուած կառք մը. հիմնեան հսկայաձև փունջ մը՝ համակ նորընջածաղիկէ կազմուած. եզրևանին՝ ժժդոյն կանաչով մը՝ սարսռուն իր ցօղունին վրայ և ամբողջ քնար մը. դամեղիան և միոզոմիսը՝ իրենց անուշ հոտով ու տեսքով կ'ժպտին գաղտագողի փոխանակուած չիկնոտ ու ամօթխած նայուածքներու՝ հանդէպ. բրաթիոն, մանուշակ, շահաքրամ, մեխակ և այլ անվերջ զանազանութիւն մը ծաղիկներու՝ անջատ կամ փունջի ձևով, բունի վրայ կամ սակառներու մէջ դրուած՝ կ'ամբողջացընեն ցուցահանդէսի ամենէն գեղեցիկ և ամենէն բանաստեղծական քաժինը, որու կատարեալ նկարագրութիւնը ընել իր կարողութենէն վեր կ'կարծէ այս տողերը գրողն։

Վերջացնելու համար յիշենք նաև հաղուագիտ և արտակարգ նորութիւն մը որ ցուցահանդէսի չհնկան մէկ մասը կը կազմէր, աքանչելի սեմիոյր ագռաւ մը՝ ճիշտ թուխակի մը պէս կ'պօռար՝ (vive Abbas pacha) այս հրաշալիքը կը վերաբերի իտալացի փաստաբանի մը որ պատիւ ունեցաւ զայն ներկայացնել Բարձր. Խեդիվին։ Խօսուն ագռաւին յաջողութիւնը մեծ էր ցուցահանդէսի ժամանակ և շատ այցելուներ ունեցաւ։

ՕՍԻՐԻՍ

14/26 Փետրուար 1896
Փարիզ

ԱՆԱՊԱՏ ՍԵՒԱՆԱՅ*

4· Սելէ· — Արքունական ճանապարհին տակ, խոր ձորի մէջ՝ Հրազդանի հարաւային եզրին վրայ չինուած է, Ներքին–Ախտապից ութն վերստ հեռաւորութիւն ունի։ Բնակիչք, որ կը բաղկանան 115 տնից, գաղթել են գլխաւորաբար Ալաշկերտի ձիվանից, նոր եկած ժամանակին թէև այս տեղ հաստատուել են, բայց յետոյ գնացել են Ղըզըլ–վանք, ուր այլազգեաց տուած նեղութեանց չը տանելով՝ նորից վերադարձել են։ Հողը չատ արգաւաւոր է և Սելակի հացը անուն ունի Տէրէկիզկում, երբեմն տաժան ջուր ունեցել են, զոր բերած են արհեստական ճանապարհաւ հարաւային կողմը տասն երկու վերստ հեռաւորութիւն ունեցող Խաչէ–Կեղ լճակից։ Մի ժամանակ գիւղի բարեսէր քահանաներից մին աշխատել է վերանորոգել նախնեաց տեղուած առուն, բայց մի կողմէն ոսմիկ գիւղականաց անմիաբանութիւնը և միւս կողմից Արաչն Սուլթանի հակառակութիւնը խափանում են եղել այս օգտակար ձեռնարկին։

Այժմ խմելու ջուրը անտանելի նեղութեամբ Հրազդանի անդնդային ձորէն կը բերեն սայլերով։ Գետակի հիւսիսային եզրը սահմանաւորվում է բարձր լերանց երկայնաձիգ չղթայով, որ Իլանլա կ'ասուի օձերի չատութեան պատճառաւ։

Հնութեան հետքեր չը կան, միայն կարծում են, որ նախնեաց Յելկերթը այն եղած լինի։ Գիւղի մօտ՝ արևմտեան կողմը մի բարձրավանդակի վրայ բերդի մնացորդներ նշմարվում են, որոյ տակից մի ջրալաց բանեցնելու չափ ջուր դուրս է գալիս։ Այս գիւղում Հրազդանից կ'որսան համեղ ու անուանի կարմրախայտ։

5· Ալեֆաթ·— Մադիամարի վերջին հայաբնակ գիւղն է դէպի Երևան։ Սելակի արևմտեան կողմը վեց վերստ հեռաւորութեամբ չինուած է կէս դաշտային և կէս ձորակային տեղում։ Արաչի բարձրադիր լեռը, որին թուրքերը Խաչէ–Կեղէ կ'ասեն, այս գիւղի արևմտեան հիւսիսային կողմն է։ Ամրոցք Ծաղկաձորի հռչակաւոր ուխտատեղին յանուն Ս. Վարդանայ՝ այս գիւղի եկեղեցին է։ Գիւղ–խաչին վիճակի ամեն գիւղերից բարե–

* Տե՛ս Ա· Մասն բիւ 3։

պաշտանների մեծ բազմութիւն կը հաւաքուի, Նուիրական Նշխարը պետային մի սեաւ քար է հագիւ կէս բաւչափ։ Ծաղուկրը Մակուից հետը բերել է այդ քարը, որուն վրայ ըստ աւանդութեան ցցել է Ս. Վարդանայ վարդակարմիր արիւնից։

Այս քարի նման մի հատ ևս Երևանի Ս. Պետրոս և Պօղոս եկեղեցումը կայ. մի երրորդը Մակուայ մէջ։ Ծաղկուրդը, որ մեծ մասամբ Մակուից, և մնացեալք Խոյից, Վանից և Ալաշկերտից գաղթել են, կը բազկանայ 172 տնից։ Ունի մի պատուական աղբիւր, որոյ ջրից մինչև Երևան տանում են, ժողովրդի հողը համեմատաբար շատ քիչ է, սակայն, որ քաոսաւուն տուն եղել են, նոյնչափ հողով կառավարուել են։ Աղբիւրի առատ ջրոյն շնորհիւ դիւղի հարաւային և հիւսիսային կողմերը ուռենեաց և բարտիի անտառներ հասուցեր են, բաց ի ամէն տեսակ կանանչեղէնից, կը մշակեն նաև վարունգ, սեխ և մեղրուկ. նոր սկսած են մշակել և մրգաբեր ծառեր։

6. Արդ-էն. — Ալափարսի հիւսիսային կողմն է երեք վերստ հեռաւորութեամբ չինուած է արևելքից արևմուտք բարձրացող անտառախիտ մորի բերանում։ Տեղացիք սոյն մորը անուանում են Նէշ-է-Զէբ, որպէս թէ Ս. Նեղոս այս տեղ ճգնել է։ Զարում գտնուած հին եկեղեցիների հիմքեր, հազուստարաններ և խաչարձաններ ցոյց են տալիս, որ ի հնումն մի քանի գեղեր են եղել այս տեղ։ Գիւղի արևմտեան կողմը մի վերստ հեռաւորութեամբ մորի բարձրագոյն տեղում յանուն Ս. Աստուածածնի մի հայկական վանքի աւերակ կայ. եկեղեցին թէև արտաքուստ քայքայեալ, բայց ի ներքուստ բաւական լաւ մնացել է։ Գաւթի դուռը հարաւային կողմն է. Նրբաքանդակ և հրաշալի ճարտարապետութիւն ունի։ Գաւթի յատակը մասամբ նաքարերով ծածկուած է որոց վրայ գժբաղդաբար տապանադրեր չկան։ Պատերի վրայ երկար արձանագրութիւններ կան ղևոնդեան նուիրատուների, որոց տարին երկու և աւելի պատարագներ խոստացել է Միաբանութիւնը, վերջին նորոգութիւնը հայոց Ջ. թուին տեղի ունեցել է Նեղոս վարդապետի ձեռօք, դուցէ այս Նեղոսի անունն է առել մորը, վանքի չինութեան թուականին չը պատահեցայ։ Գաւթին մէջ եկեղեցւոյ դրան երկու կողմերից սանդուղներով կը բարձրացուի երկու մոքրիկ մատուռներու, որոց տակով եկեղեցւոյ մէջ դարձեալ մատուռներ են։ Շինութեան ընդհանուր ձևը նման է

վայց – Զորուժ Տարսայիճ իչխանի չինած Աճադու վանքին վանքի արևմտեան կողմի բարձր սարերը, որ ձորի դլուխն են, տեղականք Ջալ–Բաբ անուանուժ են։ Չարաւային կողմինը կ'ասուի Գալաճա, ուր ի հնուժն բերդ եղել է, հիւսիսային կողմինը՝ Խրանձա, որոյ անտառների ծառերը մեծ մասամբ խոշոր ըսուած տեսակից են։

Գիւղի արևելեան կողմը ձգվուժ է մի լայնանիստ ձոր՝ հարաւից հիւսիս, Տալէլար անունով։ Թէ՛ Արղաքէնը ու թէ Պրկլիչերի մէջ ուրիշ երկու թրքաբնակ գիւղեր, նաև Նեղոս աւերակ գիւղը՝ հայազգի Աղամալովի սեպհականութիւնն են։ Ամրողջ Մաղհամարի մէջ միայն Արղաքէնը ջրաչէտ և ծառաչէտ է, լաւ մրգեղէն ունի, նաև խաղող։ Չասցնելու փորձեր եղած են և անյաջող մնացած չեն։ Ունի 100 տուն բնակիչ, եսմ անասունը հայ՝ գաղթական Մակուի, Խոյի, Պայազիտի և Տիխխիի։ Ունին նորաչէն քարուկիր մի եկեղեցի յանուն Թադէոս առաքելոյ։

7· Բլնէ · — Արղաքէնի արևելեան կողմը երեք վերստ հեռաւորութեամբ չինուած է Հրազդանի հիւսիսային եզրին վրայ։ Կը կարծուի թէ երբեմն մեծ քաղաք եղած լինի զանազան թաղերու բաժնուած, կամ մի քանի իրարու կից գիւղեր։ Արեւելեան կողմի մեծ բլրակի մը սարաւէջին վրայ է անառիկ և դժուարելանելի բերդը, որոյ պարիսպները կիսով չափ քայքայուած են, ունի սառներկրեայ ճանապարհ մինչև դեռատիը և կրկին եկեղեցիներ ընդարձակ ժամատներով, որոց կիսաքանդ աւերակները ցարդ կը մնան։

Գիւղին մէջ կան շատ մատուռներ, կամ եկեղեցիներ, որոց մէջ նշանաւոր է իր հրաշալի ճարտարապետութեամբը Խնձոնաձկեցի Ս. Աստուածածին եկեղեցին, որը այժմ իբրև գիւղական եկեղեցի կը գործածուի, կամ ոգիկէն հիանալի ու շատ բարձր է, հարաւային պատի արտաքին ճակատը երկար արձանագրութիւններ կան զանազան քառականներով։ Աւագ դրան վրայ այս արձանագրութիւնը կայ. «Թվ. ոձը. յաշխարհակալութեան քաջ և յաղթող չահին–շահ Զաքարէյի ու իվանէյի . . . յեսայեկոպոսութեան Ովաննէսի, ես մեղուցեալ ծառայ Աստուծոյ Յովհաննէս չաուշս, որ ընդհեցի զիշխանավանից մեծ եկեղեցիս յանուն Ս. Աստուածածնին և զայս Աստուածածին նորոգեցի ամով, որ ի բնէ չէր սալած և հաստատեցի ի տարին հինգ ուր ժամ ի տաճնի Ս. Ծննդեան վասն փրկութեան իմոյ. որ խափանէ զպատարագն . . . անքնքնելն։

Բջնիի անդաստանաց մէջ կան մի քանի ամայի դիւղաքաղաքներ, որոց հանգստարանները ու մատուռները մնում են։ Գիւղի երեք կողմերը ճանապարհներուն վրայ կան երեք խաչքարձաններ, որոց մին կ'ասուի Կէրակոփոփ, միւսն որ Սալակի տարին կողմն է, կ'ասուի Բաղջաղէր, երրորդը՝ Արշաքէնի կողմն է։

Բջնին եպիսկոպոսական դիւղ է, որոյ տարեկան արդիւնքն է, առատութեան ժամանակ, հինգ հարիւր խալվար ցորեն և գարի, միջակ տարին, երեք հարիւր խալվար. խոտից և պատմանից կ'ստանայ 600–1000 մեմ. անտառէն ծախուած վայսի դին 1000 մեմ. ծխահարկ՝ տուն գլուխ տարեկան երկու և կէս մեմ։ Բնակիչք հայ ու թիւրք խառն են և կը բազկանան հարիւր վեհատուն տնից։

7. Գաղէ. — Բջնիին հարաւային կողմը և Հրազդանի արևմտեան եզեր վրայ չինուած է մի քարքարուտ տեղում։ Գեսի ընդհայքը ամենէն աւելի այս գիւղին մէջ բազմապատկած է. հիւանդային կողմէն գալով կը մտնէ գի դը, մի քիչ տեղ գնալով՝ կը դառնայ արևմուտք, ապա հարաւ. ի վերջոյ դառնալով արևմուտք՝ կը շարունակէ ընթացքը։ Հրազդանի ձորը ընդհանրապէս այնքան խոր և եզրերը այնքան ժայռոտ են, որ Մաղկանոցի չատ գիւղերուն բնաւ օգուտ չունի, աւելի օդտակար եղած է Երևանի տակ եղած գիւղերուն՝ արարատեան դաշտին մէջ, և այս պատճառաւ այն կողմերը կ'ասուին Զանկէ–Պասար։

Ի հնումն Գաղին մէկ հայաբնակ եղել է, բայց արդի ժողովուրդը երբ Մակուից գաղթած եկած է այս տեղ, մի քանի տնուր թուրքեր գտել է։ Արդի եկեղեցին նախկին եկեղեցւոյ հիմանց վրայ չինել են Հրազդանի բարձրավանդակ եզրուն։ Բնակիչք բոլորը հայ են և կը բազկանան իննսուն և չորս տնից։ Գիւղի նեղուածքութենէն՝ մի մասը մտադիր է քաշուիլ արքունական ճանապարհին տակ նոր գիւղ հիմնելու իրենց սեպհական հողին վրայ։

8. Մաբաճան. — Մի պատուական ձորի մէջ չինուել է, բնակիչք 40 տնուր են Մշից գաղթած։ Եկեղեցւոյ առաջ եզած երկու խաչարձաններից, «մին Ձը. ես Անդրէաս հայրս, որ կանգնեցի զխաչս ի բարեխաւսութիւն հոգւոյ իմոյ և եղբարց»։

9. Ադէքաս. — Շինուած է մի բարձր բլրի վրայ, ժողովուրդը 44 տուներ կը բազկանայ ու գաղթել է Մակուից։

10. Գաբրանաբայ. — Մի գաւառային տեղ չինուել է Հրազ-

դանի սրևելեան կողմը, գաչտը չրջապատուել է բարձր բլուրներով, գետի արևմտեան մերկ ստրը՝ Խիչ ասբ կ'անուանի, որովհետև երբեմն չատ բոխի կը լինի եղեր, հարաւային սարին Սա-պեւէն կ'ասեն, որովհետև գետը այդ սարի ստորոտից կը անցնի, հիւսիսային կողմը բամբակաճորի լեռները կը բարձրանան։

Այս գիւղի նախկին անունն է Գառնեղ-, այժմու անունը Սարտարների ժամանակակից մնացել է, որովհետև այն տանէն մի քարուկիր իջևան (քարվանսարայ) լինել են, որ ցարդ մինում է, թէև տեղ տեղ խախտեալ և քայքայուն։ Մի փառաւոր եկեղեցի չինել են, որ ամբողջ վիճակում նորաչէն եկեղեցիների մէջ առաջինը կարելի է համարել։ Երկու գրչեայ աւետարան կան, մին՝ Թոխ-Մանուկ անունով, գրուած Զի Թուին հայոց, միսն՝ Կոչի Աւետարան. վերջինս գրչութեան յիշատակարան չունի, այլ վերջին տաղտպի յիշատակարանը կայ գըրեալ ԻՄ· Թուին։

(Շարունակելի)

ՍԻՐՈՅ ՕՐԻՆԱԳԻՐՔ*

48· Մէն մի անհատ իւր արժանեաց համեմատ կ'ստանայ սիրոյ քանակութիւնը։

49· Մայր մը սիրուն աղջիկ մը կ'ծնի, և քանի տարի ամբողջ զան կը անուշանէ, կ'գուրէ, կ'շոյէ, անոր հետ կ'շնչէ, անոր հետ կ'ննջէ, անոր հետ կ'խորհի, ամբողջ գիշերներ անքուն կ'հսկէ երբ կ'հիւանդանայ։ Մայր և աղջիկ սիրտ սիրտի, միս միսի, ոսկրած են գարուս մը մէկ հինգերորդ մասին պարունակած միլիոնաւոր վայրկեանները։ Եւ ահա՛ այն քանամեայ վարդագեղ հրեշտակը՝ ճամբուն վրայ զոյգ մը սև պիտերու կ'հանդիպի որ տապատ հագած է, և այս պիտերը ու տափատը սոյն քանամեայ աերը կ'տապալեն։ Մայրական արևը ահաբեկ կ'սառի այս անգութ և անողոք անիրաւութեանց առջև։

50· Երբ սիրոյ վրայ խօսիք, ինչ բառարան կ'ուզէք գործածեցէք, եթէ ուզէք ամենէ բաղմալեզուեան բառարանը առէք, բայց երբէք անէծք բառը մի՛ գործածէք, վասն զի բնաւ իմաստ մը չունի։

51· Քիչ անգամ կ'պատահի որ առողջ մարդիկ մեռնին առանց կրնկան մը հետ յարաբերութիւն ունենալու, բայց շատերը կ'մեռնին առանց սիրոյ։

Առանց համար սէրը քաղցի և ծարաւի կ'նմանի, միայն այս տարբե-

*Տե՛ս Ա· Մ՛՛՛, թիւ 4։

քուԹեամբ որ քաղցը և ծարաւը կ'յագին հացով կամ գինիով, իսկ այս քաղցը կ'յագի մեկ կինով։

52. Ժամ մը սիրել՝ անասունի յատուկ է, օր մը սիրել՝ ամէն մարդու յատուկ է, ամբողջ կենացը մէջ սիրել՝ հրեշտակներու յատուկ է, ամբողջ կենացը մէջ միևնոյն անձը սիրել, Աստուածոյ յատուկ է։

53. Կնդամի մարդը բազմակին է, Ժրդ մարդը միակին է։

54. Բնութիւնը մարդս բազմակին ըրած է։ Կնոջ ամէնէն վեհ պաշտօնն է զան միակին ընելը։

55. Այն որ կենացը մէջ անէպ սիրած է, կ'չփոթի ըսելու Թէ ո՞րն է իւր առաջին ատյգ սէրը։ Այս անել ճամբէն ելնելու համար պէտք է քնագէտներուն պէս ընէ երբ իրենց դասակարգութեանց մէջ չփոթին, կ'ատիպուին կամ ժամանակագրական կամ այրուբէնի կարգաւ զետղել։ Ըստի ամէնէ բուռն սէրը կամ ամէնէ հինն է կամ այն որ Ա. ով կ'սկսի։

56. Սիրուած կինը, մայր, քոյր, աղջիկ, ամուսին միշտ հրեշտակ մ'է։ Այն կինը որ չսիրուիր, Թէ Ֆօրնարինայի պէս գեղանի անգամ ըլլայ, էգ մ'է։

57. Այն որ կ'կարծէ Թէ երկու համբոյրներ իրար կ'նմանին, Թէ երկու գգուանք իրար կ'հաւասարին երբէք սիրոյ այրուբէնը կարգացած չէ։

58. Այն որ ձեռք մը սեղմելու լեզուն չհասկնար, ո՛չ սիրելու արժանի է և ո՛չ սիրուելու։ Անով աշխարհիս ամէնէ պարզամիտ կինը կրնայ ըսել — «կեցի՛ր կամ, գնա՛»։ Անով կրնայ ըսել նաև, «քեզ սիրեցի, կ'սիրեմ, և պիտի սիրեմ։»

59. Ամուսնութիւնը, (1) Ֆուէրլի տրուած սէր է։

60. Ով որ կ'սիրէ և սիրուած է, գոնէ օր մ'անգամ կեանքը անիծելու իրաւունք չունի։

61. Մարդիկ ամէն օր կիները զրպարտելով կ'յուսան մրիժ լուծել։ Բայց անժխտելի ճշմարտութիւն մ'է Թէ աւելի դիւրին է հարիւր մարդ նուաճել քան մեկ կին։

62. Ցեսին սպասուհի մ'անգամ հինգ վայրկեան մէջ կրնայ Պելվեդերի Ապօլլոնը կամ Թագաւոր մը գլխէ հանել։ Ցեսին աստիճանի ստորին պատնէշ մը կարելի է որ Ապօլլոնի սերը մերժէ։ Ահա՛ այս է կնկան բուն մեծութիւնը։

63. Պատմագէտները ճիշտ մեկնած չեն Բիւրուց կատաղոց առակը։ Այս առակը կ'նշանակէ որ կոյս մը իւր մէջ աւելի պզտիկ կոյսերու լեգեոններ ունի, որոնք հետզհետէ պէտք է ծնին, սիրուին և յագթուին։ Երբ մին մեռնի պէտք է հետևակալ օրուան համար միւսին ծնունդ տալ։

64. Վա՜յ ան կնոջ որ շատ բաներու մէջ կ'ցցուէնէ Թէ մարդկեն աւելի՛ գիտէ։ Մարդս կ'սազ որ միշտ իւր ընկերուհւոյն ուսուցիչը ըլլայ և ոչ Թէ աշակերտը։

---

(1) Ներքեմ կ'խնդրենք որ այս բառին Ֆրանսերէնը գործածեցինք, երէ հայերէն դնէինք խմատին Թէ ոյծ պիտի կորսուէր եւ Թէ ամուշաբիւնը։ Conserve կ'նշանակէ առւփներու մէջ պահուած պտուղ կամ բանջարեղէն, կ'նշանակէ նաեւ Ֆաղցրաւենիք։

65. Պլատոնական սերը՝ սիրոյ մէկ մասն է, իսկ ախտահարութիւնն ալ ուրիշ մէկ մասն է, երկուքը միանալով կ'ըլլայ սէր։

66. Կարելի է որ մարդ ամբողջ կեանքը Պլատոնական սիրով անցնէ, ինչպէս կ'պատահի նաև որ մէկ մարդ մ'ըլլայ առանց պատերազմը չտեսնելու, առանց մէքենայ մը հնարելու, առանց գիրք մը գրելու, բայց որ և է պարագայի մէջ մարդկութիւնը իրաւունք ունի հարցնելու իւրովի։ Ինչ ?—ոչ—ոչնչո—։

67. Երբ մարդ մը մեծ հարստութիւն մը կ'դնէ կնոջ ոտից առջև, մարդուն ամենէն մեծ փառքերէն մին է, բայց երբ մարդս ցոփ հարստութեան մը կ'ծախէ ինքզինքը մարդկութեան ամենէ մեծ արատներէն մին է։

68. Կ'ցաւիմ այն կնոջ որ ինքզինքը մարդու մը կ'ծախէ, բայց այն մարդը որ կնոջ կ'ծախուի պէտք է կօշկակներու տակ գլուխը ջախջախել։

69. Կարելի է որ գեղանի կին մը հանճարեղ վնիկէ մը նախանձի, այնինչ երևելի կիները ընդհանրապէս իրենց սենեկապանուհիներէն կնախանձին։

70. Այն կինը որ առանց որ և է պատճառի կուլայ, կ'նմանի այն մանուկին թաչունին որ սերը հրապիրելով կ'սպանէ։

71. Սիրոյ մէջ՝ քանամեայ տարիքին մարդ ժամը մէկ մղոն կ'առնու, քառասնամեայ տարիքին մէջ ժամը հարիւր մղոն կ'առնու։

72. Տասնվեց և վիսուն տարիներու մէջ միևնոյն կերպիւ կ'խոզրեն սերը, այսինքն իրը ցաւրմահութիւն։

73. Ոչինչ պահանջել և ամեն բան առանալ, ահա՛ այս է մեծ սիրոյ և բարձր պէրսեպրութեանց թանկագին գաղտնիքը։

74. Պէրսեպրութիւնը բնութեան մէջ սիրոյ ամենէ հաւատարիմ և ամենէ կատարեալ նմանութիւնն է։

75. Ոչինչ առանալ, միշտ վիշտ կրել և միշտ սիրել, ահա՛ սիրոյ ամենօրեայ հրաշքներէն մին։

76. Ամեն բան տեսնել աչքերը գոց, ոչինչ տեսնել աչքերը բաց, ահա՛ սիրոյ ամենօրեայ ուրիշ հրաշք մը ևս։

77. Աշխարհիս մէջ շատ կիներ կ'մեռնին, բայց չ'կայ կին մը որ մեռնի առանց տէրէ բառը հոլոված ըլլալու։

78. Սիրոյ աշխարհն ալ ունի իր դիւցազուններ, վիշտեր և սուրբերու ոլիմպոսը, և կրնամ ըսել որ ամեն ապրած բանթէոնները և դրախտները կ'դերազանցէ։

Թարգմ. Գ. ՆՇԱՆՍԱՆՑԱՆ

ԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ*

* * *

Եւ որոնք են մարդկային արժանապատուութեան այդ պայմաններն։ Առաջինն է անձնիշխանութիւնն։ Վասն զի այն որ ազատ չէ իր գործերն ինքնին կարգադրել, այն որ ուրիշին խելքով կ'խորհի, ուրիշին ըղձմամբ կ'գործէ, ոչ արժանիք և ոչ բնաւորութիւն ունի, քանի որ պատասխանատուութեան զգացումէ զուրկ է։ Անհատական ու տոհմային անթիւ օրինակներ կան հաստատող թէ անպատասխանատուութենէ ի՞նչ չարիք կ'ծագին։ Բաւական է միայն աչք մը նետել պատմութեան վրայ տեսնելու համար այն ստորին ու վատթար կացութիւնն որու կ'ենթարկին բնաւորութիւնները երբ վայրագութեան ու տարկուսեան լուծը կ'կրեն։ Եւ միթէ ընկերային անազատութեան զոհեր չէ՞ն գաղթային խափիկներ ու միջնադարեան տրուկներ, միթէ մոլեռանդութեան չահատակներ չէ՞ն և դեռ ևս չե՞ն անոնք որ բարոյական ազատութեան անընդունակ՝ անբանաւոր հաւատալեաց տոչոր գլուխ կ'ծռեն և հին հեթանոսական կուռքեր կ'պաչտեն։ Այսպիսիներ կ'հրաժարին բանական մարդու արժանապատուութենէ, կուրօրէն ամեն անապաշտական թելադրութեանց կ'հետևին և նուաստութեան մէջ կ'թաղուին։ Քանի բանականութիւնը ազատագրի և ընկերային զարգացման հետ պատուոյ զգացումն զօրանայ, մարդը կ'թօթափէ իր սրտէն, մտքէն ու մարմնէն ինչ որ անոնց ապականութեան համար հիմնուած են, պայմանադրական անհիմն զգացմունք, նախապաշարմունք և հիմնարկութիւն։ Արդ՝ ինքնասիրութեան և այլասիրութեան մէջ փափաքելի ներդաշնակութիւնը հաստատելու համար անհրաժեշտ են ամեն հնարաւոր արտօնութեանց անհետացումն ու հաւասարութեան ըզգացման զարգացումն։ Այս պայմանաւ միայն հնար է ջնջել այն աղէտքն ու անբարոյական արարքն որ մերթ ընդ մերթ կ'ծպղին հակամարտ չահերու, կարծաց և օրինաց դոյութենէն։ Միութեան, համաձայնութեան կեանքն հիմերն ուրանմն ալ ա-

*Տե՛ս Ս. Մո՛ւռ, քիւ 2։

բութեան և իրաւանց վոխադարձ վայելման մէջ կ'գտնուին, համաձայնութիւն՝ որով բնաւորութիւններն կ'չինուին ինքնասիրութեան և այլասիրութեան մէջ։

Սակայն, ինչպէս մեր բարոյագէտը դիտել կտայ, այդ երկու ղղացումներու համաձայնութիւնը կրնայ խանգարել միոյն կամ միւսին չափազանցութեամբ կամ անբաւականութեամբ, ու այլ և այլ վոտիռնութիւններ յառաջ բերել։

—«Երբ ինքնասիրութիւնն այլասիրութեան վրայ կ'իշխէ անյարձակաբնիկ անուամբ այլայլութիւն մը կ'կրէ։ Անձնասէր էակն կուզէ ուրիշին ծառայել բայց այս պայմանաւ որ մեծնայ և մատուցած ծառայութեան չնորհիւ գերակայութիւն մը ստանայ։ Կ'տիսիքքի անձնասէրն որ ամեն մարդ երջանիկ լինի, բաւական է որ այդ երջանկութիւնն ըստ համոյս հայեցքին։ Վերջապէս բարեգործ երևելու չվարանիր որպէս զի՝ աւետարան եղնելով՝ կարևորութիւն ստանալ։ Ահա այս ձկտումն նշանակելու համար է որ անձնասէր այլ ցուցամոլ մարդկան համար ըսուած է թէ իրենց բարեկամներն չօժարակամ գնտը կ'նետեն որպէս զի վանոնք ապատելու արժանիքը չտեին։

Այն անձնասիրութիւնն որ սեռական բնազդումներու կը հակի պչրասիրութեան ծնունդ կ'տայ, որով չատ կիներ կ'կարծեն թէ իրենց անձով կ'զբաղեցնեն գմայլողներու խումբ մը։ Այս նպատակին հասնելու համար ի՛նչպէս կ'հագուին ու կ'չքեղուին, ո՛րքան խէք ու մեղմեղանք կ'ոպատեն, և չեն զգար որ ճշմարիտ սիրոյ և ակնածութեան չրջանէն դուրս կ'նետուին։ Այնքան ուշադրութիւն դրգռելու հակամէտ են որ վերջապէս տղոց պէս տալտուկ կ'պատճառեն, երբ կ'փափաքին որ մարդիկ իրենց հետ զբաղին, մտիկ ընեն և գմայլին։ Ամէնց անհանգստութիւն մը կ'ծագի և կարգ մը կիներ՝ թէև ըստ պարագային չնորհաբեր և վերհանձն, կրնան իրենց խնկարկուներուն դժբաղդութեան պատճառ լինիլ։ Իրենց եսին լիառատութիւնն ուրիշին ետք կ'կլլէ։

Երբ անձնասիրութիւնն այնքան կ'ծանրանայ որ ինքնամոլութեան աստիճանը կ'հասնի՝ նարկիսոսիկան կ'կոչուի, որ գերագանցութեան հովեր կ'առնու, և հոգի կ'տայ մանաւանդ չղջուղուն բաներու համար։ Պատիւ, տիտղոս, չքանչան, փետուր և ոսկեհուռ ժապաւէններ կ'սիրէ։ Ինքնասիրութեան այս զեղծումն հոգւոյ ակարութեան գան չարութեան նշան է, հետևապէս այդ տղայական ու միանգամայն զառամական մոլութիւնն իրր

պատիժ կ'ընդունի ծաղր ու ծանակ։ Երբ վախկոտ մը տիրոջ մը չափին ներքև կ'ուռի, երբ ինքնահաւան միջակութիւնը կ'քծնի դէս ու դէն որ նշան կորզէ, երբ մանկավարժին իր տիրոջ զգեստներովը կ'պճնի, երբ կարգ մը մարդիկ այնպէս կ'երևակային թէ հանրային կարծեաց առջև բարձր կ'սաւառնին խաւտուտիկ զարդեր կրելով, ազնուախոհ մարդուն ծիծաղը կ'շարժեն։ Բայց ունայնասէրն ունայնասիրութեան թերութիւնները չտեսներ եթէ իր դրացին կ'չտարբի, կ'զարդարի ու կ'պճնի, ինքն ևս կուզէ չտար, զարդ ու պճնանք գործածել։ Բիւրաւոր անձինս մարդիկ այս օրինակին կ'նեւևին և նորաձևութիւնն այսպէս կ'հաստատուի, ծաղրաշարժ հագուստ ու կապուտ տալով կանանց և մինչև իսկ մարդոց և ընտանիքներ կործանման մատնելով։

Անշահասիրութեան վրայ կ'խօսինք, սակայն եթէ այդ մոլութիւնը քննուի և հետևութիւնները նշանակուին, ակներև պիտի տեսնուի որ մարդկային ազգի համար քանի աղետալի է։ Մէկ արժանիք, պատիւ կ'զոհուին ունայնասիրութեան, երբ քաջ պիտեն շահագործել կարգ մը մարդիկ իրենց հակառակորդներուն տալանդն եղծելով և պատուոյ տրուած վէրքն մասնաւոր ընդհատութեամբ մը վտանգելով։ Քանի՛ քանի եպերելի գործեր կերոյ մը փայլուկով կ'պզտղին և առ հասարակ հանրութեան աչքին չեն երևիր։—

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ՏԱՒՏԱՒ ԹԱՓԹԱՓԵԱՆ

Ամսոյս 15 ին 73 տարեկան հասակի մէջ իր երկար կեանց ընթացքը կը կնքէր այրի Տիկին Մարիամ Տաւտաւ Մ. Թաքթաքեան, և յաջորդ օրը ան որ մեծաչուք յուղարկաւորութիւնը կը կատարուէր ի ներկայութեան խառն ու պատուաւոր բազմութեան մը՝ որ վրդմացած էր իր վերջին յարգանքը ընծայել հանգուցեալին։

Տիկին Թաքթաքեան՝ որ Իզմիրի պերճ ընկերութեան կը վերաբերէր, ամուսին էր վաղուց վախճանեալ Մարտիրոս աղայի Թաքթաքեան՝ եղբայր Թաքթաքեան Պօղոս Սրբազանի, Ձկզսյիրլեան Մկրտիչ Ա.ի Իզմիրի օրով անօրէն Իզմիրի մաքսատան,

և որ ասկէ յիսուն տարի յառաջ Պուսայէ քաղաքս գաղթած էր հանդերձ ընտանեօք։

Տիկին Թաքմաքեան իր ապրած հին ժամանակներու բերմամբ թէև չէր ստացած ուսումնք ու կրթութիւն, այլ իր բնական խելքով ու պատկառելի նկարագրով ո՛չ թէ միայն կրցած էր սիրելի ու ժեծարելի հանդիսանալ, այլ որ աւելին է՝ ըլլալ լաւ ամուսին և ընծիր մայր իր երեք ընտիր զաւակներու, Տիրան, Զարեհ և Զարուհի, որոնց տուած էր պատշաճ կրթութիւն, և որոնց ազգած էր իրենց մօր մասին անչեզրի սէր ու ժեծարանք. երևոյթ՝ զոր օրքան հաճելի՝ այնքան հետաքրքրական է տեսնել այսօր, և որու հիմը հարկաւ պէտք կ՚ըլլայ փնտռել հանգուցեալ տիկնոջ մէն հաստատակամ գովելի յատկութիւնն մէջ՝ որ գիտէ ու կրնայ մայրական խանդաղատանքը հաշտեցնել լաւ կրթութեան մը պահանջմանց հետ։

Հանգուցեալ Տիկին Թաքմաքեան՝ որ իր բարոյական ու ֆիզիքական բարեմասնութիւնները պահեց մինչ ցվերջ, բազդաւոր ու երջանիկ կեանք մ՚անցուցած է այս բազմաղէտ աշխարհի մէջ՝ ուր երջանկութիւնը սովորական երևոյթ մը չէ՝ անշուշտ. հարստահարուած միշտ, ու մխիթարուած իր զաւակներու սիրով ու անոնց ամեն ակնկին դրաւած բարձր դիրքերով։ Իր անդրանիկը՝ Տիրան էֆէնտի՝ որու տարաժամ մահը անմխիթար ու — կրնանք ըսել — միակ վիշտն եղած էր իր մայրական սրտին, տնօրէն սրտաբին յարաբերութեանց տեղական կառավարութեան, ամուսնացած էր Օր. Զարուհի Եաւուզի հետ, զոր թողուց այրիացած։ Զարեհ էֆէնտի՝ ուսեալ ու համակրելի անձնաւորութիւն մը՝ որ բարձր դիրք մը գրաւած է Իզմիրի Հայ Հասարակութեան մէջ, աղնիւ ու բարեկիրթ կին մ՚ունի, դուստր Պալեան էֆէնտիի վ.ժ.ական, և որ իր բարձրատեսական չնաչխարհիկ տաղանդով քաջածանօթ է քաղաքիս նաև օտար Հասարակութեանցն։ Իսկ Օրիորդ Զարուհի Թաքմաքեան ամուսին է ի Պօլիս Սարգիս էֆէնտիի Համամճեան, պատուիրակ Ընդհ. Պարտուց Վարչութեան՝ Ութժիի տօմսի։

Իզմիր 17 Փետրուար 1896

Մ. Ե.

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Դրեցինք արդէն այլ իմն առթիւ թէ քաղաքիս մէջ քանիմը տարիէ ի վեր հաստատեալ « Մեսրոպեան Դրասիրաց Ընկերութեան » անդամք կիւրակէ օրերն անձնուիրութեամբ Ս. Մեսրոպեան վարժարանին մէջ ձրի դասախօսութիւն կ'ընեն չուկան արուեստով զբաղող անուս պատանիներու, անոնց գիրք, թուղթ դրիչ ձրի մատակարարելով։

Սոյն Ընկերութեան Գործադիր ժողովը հետեւեալ անդամներէ կազմուած է։

Պարոնայք	Պօղոս Զիւռնակիսեան	Ատենապետ
»	Վարդան Փափազեան	Ատենադպիր
»	Սարգիս Ց. Գույումճեան	Դանդաղեր
»	Հայկ Շահինեան	
»	Յարութիւն Ահարոնեան	

Այժմ ուրախութեամբ կը յիշատակենք թէ այս Ընկերութեան անդամք իրենց կիւրակնօրեայ աշակերտաց թախանձանօք՝ քանի մը շաբաթէ ի վեր ձեռնարկած են կիւրակի օրերէ զատ շաբաթուան մէջ ևս երկու օր երեկոյները ձրի դասախօսել քաղքիս « Հայ Մանկապարտէզին » մէջ, որոյ վարչութեան Ազնուհի անդամք բարեսիրաբար իրենց սրահներէն մին այս Ընկերութեան տրամադրութեան ներքև դրած են։

Դասախօսութիւնք կը լինին ամեն երեքշաբթի և հինգշաբթի երեկոյները ժամը 6 էն մինչև 8, և դաս տուած առարկաներն են Հայերէն, Ֆրանսերէն, Տաճկերէն, Անգլիարէն, թուաբանութիւն եւն։ Արդ՝ կը խնդրուի մեր Ազգայիններէ՝ որ իրենց ծանօթ անուս պատանիները յորդորեն սոյն դասախօսութիւններէ օգտուելու։

Նշանակութեան արժանի է, որ Գրասիրաց Ընկերութեան ազնիւ երիտասարդ անդամք, որոց ուսումնասիրական այս եռանդն ամեն Ազգայնոյ կոչմանէ կը դրուատուի, և իրաւամբ կը դնահատուի, իրենց այս յոյժ կարևոր ձեռնարկին համար, գրաւական կոչում ըրած չեն հասարակութեան, այլ բաւականացած են, իրենց և իրենց ընկեր անդամոց մէջ, որոց անուններն ուրիշ առթիւ պիտի հրատարակենք, հանգանակութիւն ընել իրենց բազմապիսի ծախքերը հոգալու համար։

Զմիւռնիա, 7 Փետրուար 1896 * * *

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ· Պոլիս, 25 Փետրվար 1896

Բաբելոն, Բաւուոն ու չարին, ճշմարտին ու սուտին տարբերութիւնը քիչ չատ իմացած էի, բայց տակաւին չէի տեսէի հանճարի ու յիմարութեան ազդակցութիւնը։ Մարդ ինչեր՝ ունի սորվելիք՝ գլուխն հողէ բարձի վրայ չդրած, ինչ տարօրէն ու այլանդակ բաներ ունի տեսնելիք՝ դեռ աչքն արեւուն չգոցած։ Ոչխարներ՝ արարած՝ որ այսօր իրրեւ լաւ ու ճշմարիտ պաշտածը վաղն իրրեւ վատ ու սուտ կ'մերժէ, այսօր իրրեւ մեծ ու վեհ հռչակածը, վաղն իրրեւ փոքրոգի ու անարգ կ'դատապարտէ։ Եւ ինչ կ'մնատէ, լո՞յս թէ պատրանք, եղեմն թէ գեհենն։ Անշուշտ՝ իր կենցաղավարութեան նայելով, ինքն ալ չգիտէ և այէծուի կ'տատանի կոչտ իրականութեան ու գեղանկար երեւակայութեան մէջ, մինչեւ որ անէութեան կամ հոգեփոխութեան մէջ ապաւէն մը գտնէ,

— Կ՞ն, նորէ՞ն երեմիական ողբ, նորէ՞ն փիլիսոփայութիւն, և ծակ փիլիսոփայութիւն, պիտի մրմռաս — Ո՛չ, մի պատառ յօնքդ, ոչ, իրողութիւն պիտի խօսիմ, և յատկապէս պիտի պատուիրեմ քեզ, որ չկարդաս գիրք մ'որ Հանճարէ մարդ անունը կ'կրէ։ Եւ ինչո՞ւ համար, վասն զի կ'վախնամ որ խելքիդ չգայ։ Ինչ չուտիկ մարդիկ են այդ պիտուններըս։ Ամեն բանի իւիկն ու ծլիկը կ'պրպտեն, ամեն բանի խաւերը, ծալքերը կ'բանան, ամեն բնական, մարմնական ու հոգեկան գազանիք դուրս հանելու կ'ճգնին, և երբ լաւ մը կրկտեն, կոտրատեն, մանրեն, յօշոտեն նիւթ, մարմին, հոգի և ուրիշ ինչ որ կուզես, կ'դառնան հեգնօրէն երեսդ կ'նային ու կ'ըսեն· — Ահա ձեր պաշտած էակն, տեսէք, դիակ մ'է, ահա ձեր երկրպագած գոյակն, տեսէք, լոկ փուչի, հիւղ է։ — Եւ իսկոյն միաքդ ու սիրտդ տակն ու վրայ կ'ընեն։ բարոյական և իմացական յեղաշրջում մ'որ քան ամեն ֆիզիքական այլափոխութիւն աւելի տաժանելի, աւելի վտանգի է։ Վասն զի՝ քու սիրական թերահաւատներդ քեզ կ'բաժնեն, վասն զի քեզ իրրեւ ծաղու արժանի խաւժիկ մը, խալիկ մը կ'ներկայացնեն աշխարհի խայտուկներու թատերաբեմին վրայ, մինչդեռ անդին գուսաններու հնչատուր ձայնն

կ՚երգէ, — երկիրս կ՚յառաջդիմէ։ — Ի՞նչ նուաստութիւն, ի՞նչ հեգնութիւն։ Եւ միթէ պարտս այս մանրակրկիտ, բծախնդիր ոգին, թո՛ղ թէ յառաջդիմութեան, ատչք նախանձու ու վրէժխնդրութեան նշան մը չէ՞։ միթէ մարդ էակն որ գերազոյն կ՚ին անգամ իր պատկերին նմանցնելու յանդգնած է, որ ամեն ինչ որ վեհ է, գոնէ մեր տկար ըմբռնման առջև, ամեն ինչ որ սուրբ է, գոնէ մեր սրտին անդորրութեան համար, նուաստացընելու հակում մը չունի՞։ Այս կէս գռեհկավառական, կէս ալնուազպետական, կէս ոսկեպաչա եռասեռ խառնուկ դարուս մէջ անհանդուրժելի կ՚թուին հանճար, բարոյական գերազանցութիւն, գերմարդկային ոգի, և արևներու մէջ բիծեր գըտնելու փորձերը կ՚չարունակուին, մանաւանդ այն արևներուն մէջ, որ մարդկութեան լուսատու ջահերն են եղած, և չէ թէ այն խաւարումներուն մէջ՝ զոր թէև պատմութիւնը ատչք անմտաբար կ՚հռչակէ, այլ մարդկութեան խիղճն իրրև պատուհասներ կ՚անիծէ։

Եւ հիմակ՝ մեր խօսքին թելն առնլով, նոր կ՚իմանամ որ յիմարութեան սահ հանները գեղերելով միայն հանճարները ծնած են, ձչմարիտը՝ Ս. Լամպրօզօ անսիրտ գիտուն մ՚է որ անխնայ կ՚ջարդէ բիւրաւոր հանճարներու ուղեղն և անոնց մէջ խելագարութեան զգալի թելեր կ՚տեսնէ։ Եթէ խելագարն ու հանճարեղն համանիշ բառեր են, ի՞նչ կայ ամէն մարդերու մէջ քան հանճարն, մանաւանդ ներկայ ժամանակիս մէջ։ Փանինն՚ր կան որ այդ ձիրքով կրնան պարծիլ։ Նոյն տեսակէտով ողբալի էակներ են անոնք որ խելքի մի քանի հատիկներ պահած են իրենց գանկին մէջ։ Տարակոյս չունիմ, բարեկամ, որ հոգւոյդ մէջ բուռն իղձ մը ալիսի ծնի յիմարութեան գտակը հագնելու և հանճարի հովեր առնլու, եթէ միայն չանճռէի ծպըշ կարգաս։ Այո՛, հանճարի յատուկ է խելագարութիւնն, որ ըստ Լոմպրոզօի, իր այլազան երևոյթներով, կ՚տեսանուին մարդուս հագուստին, բնաւորութեան, կենցաղին, իր յարաբերութեանց և գրուածներուն մէջ։ Ուստի՝ եթէ կ՚փափաքիս հանճարի լուսապսակը ըսլորել գլուխդ, և ո՞վ չփափաքիր, բաւական է խենդ ու խելառ բաներ խօսիլ, գործել ու գրել, և եթէ չունիս այդ բնատիպ իմացական ձիրքը, դէմ կ՚տառնաս չարն և ի վերջ տառապի ու խնկելի մարդ մը կ՚դառնաս։ Խելք կեղծելն ալ դժուար բան չէ, այս մեր կեղծ ու պատիր ընկերական վիճակին մէջ, ընդհակառակն մ՚է կեղծութիւնն

ոչ միայն մեր բարուց, օրինաց մէջ, այլ և մեր ամենէ նուիրական պաշտամանց մէջ։ Եւ ինչ պատիւ, յաջողութիւն ու դանձ կ'ատանայ այն որ բուսական ժամանակ՝ դիմակն երեսը՝ յանուն ճշմարտութեան սրմէ կ'պարչի, միամիտներ կ'պատրէ, անմեղներ կ'զրպարտէ, մաերիմներ կ'մատնէ, և ասպա երբ վար կ'գըլորի, իրեն համար նոր խորխրատ մը կարծէ գտնել, ուսկից՝ իրրև նոր լուսաւորիչ՝ ելնելով՝ աշխարհս լուսաւորելու կ'յաւակնի։ Եւ քանի՛ կ'սիրէ ժողովուրդն կեղծ լուսաւորութիւն, արտասովոր չարժուք, արտառոց ցոյցեր, զուրկ ամեն բանաւոր ուղղութենէ, և կ'զմայլի կ'մնայ։

Իրաւ է՝ Ս. Մխիթ կ'ըսէ որ մեծաւն ջրերու լճակի մը կ'նմանի ընկերութիւնն երբ արտակերպրոն բնութեան սէր մարդիկ երևան գալով չշարժեն ու երբեմն չպղտորեն այդ ջրերն՝ յոգուստ յառաջացման։ Սակայն այդ արտակարգ հոգիներուն յիմարական ձիրք կ'զննայ, հակառակ Ս. Լամարթոզի, որ պատմութիւն ի մեռին, ամեն հանճարի մէջ խելագար դրօշ մը կ'նըշմարէ,* ի ծնէ մինչև արբուն հասակը, և իր գրքին մէջ ի տես բերելով թէ գիտութեանց և թէ արուեստից մէջ, թէ դրականութեան և թէ ճարտարապետութեան մէջ հանճարեղ արանց ու կանանց անուններն, մի առ մի զարմանալի հմտութեամբ ու հարցաքրութեամբ կ'հետիլ այն յիմարական արտայայտութիւններն որ հանճարի յատուկ են, և ասպա անոնց մեռերական, ժառանգական, բնախօսական և այլ պատճառները կ'բացատրէ։ Եւ ինչ հարկ յիշել արտակարգ հանճարներու խելայեղ արարքը, քանի որ մեր մէջ և ան ալ անպակաս են մանուկներ, պատանիներ ու արբուն մարդիկ որ երբ ընկերային որոշ կանոններու և ընդունուած կարծեաց դէմ խօսին ու գրեն, և մանաւանդ իրի մը համար բնածին ընդունակութիւն մը ցոյց տան, իսկոյն ամեն կողմէ հրապարակ, ինքնատիպ, արտակերպրոն կ'անուանը են՝ ձայները կը լսուին։ Եւ ինչո՞ւ հետուն երթանք, մերմէ չ'մերևնք յատուկ յարգ ու պատիւ չեն ընդունիր յիմարներն, մերմէ հարցուկներ, վհուկներ՝ յիմարութեան քողով չեն թափառիր ժողովրդեան ծոցն և չատ տեղ դրամ, պաշտօն չե՞ն կորզեր։ Ո՛ պիտի քանի քանի հանճարներ՝ իրրև խենթ, կ'տառապին հիւանդանոցներու մէջ, քանի՛ քանի մեծ հոգիներ՝ որոշեալ անգործ և անպաշտպան, կ'թափառին ու կ'մեռան վայրագներու մէջ։

Թերևս՝ յիմարութիւնն գտած այդ համրաւն ու մեծարանքն է որ ընդ հանրապէս այր ու կին, ջլախտական, հիացական մըտրամներով արբչիս, անլուր, անսովոր գործերու ու գրուածներու տեսարան մը կ'պարզեն մեր առջև, թերևս ոչ միայն անհատներ այլ ժողովուրդներ յափշտակութեան, բանդագուշանքի, քնաջրջութեան վայրկեաններ ունին, երբ անդիտակցաբար կ'նետուին անծանօթին ծոցը։

Եւ թերևս իրաւունք ունի Օրկլիէն Եօլ, սրամիտ հրապարակագիրն, երբ կըսէ — թէ անվիճելի է որ յիմարութիւնն ամեն օր կ'ծաւալի մարդկային սեռի վրայ։ Կան ժամանակներ՝ ուր թագուն մենամարներ ձև մը կ'առնուն ու երևան կ'ելլենն։ Կարգ մ'ոճիրներ ժողովրդային կ'դառնան, կարգ մ'անկանոն սովորութիւններ խուժանը կ'գրաւեն։ Կարծես յիմարութեան մագնիսականութիւն մ'է, որ կ'գրգռէ կիրքն մերթ ոճրագործութեան մերթ անձնուիրութեան։ Շատ ուշագրաւ ալեակ մարդկային յիմարութեան պատմութիւնն, եթէ գրուէր։ Օղը, ջուրը, կլիման չեն որ այդ վիճակին կ'տանին մարդկութիւնն այլ աւելի հոգեկան, տոհմային վիշտեր ու անձուկներ, որոց դարման քաջիչներու ձեռքը չէ։ Կարելի չէ, կըսէ, Տօք։ Բուկլն երևակայել թէ ինչ անհեթեթ, ինչ ալանդակ բաներու ենթակայ կ'գտնուի մարդու միաքն, երբ ախտաժէտ ապրեցութեան (ըստ Լամպրոզոյի հանճարի) ներքև գտնուի։ Տեսայ խելագար մ'որ կարծէր թէ երկինքն իր մատին ծայրը կ'կրէ, ուստի միշտ վեր կ'բանէր մատն որպէս զի երկինք չկործանի և աիեզերքը չխորտակէ։ Ուրիշ մը կարծելով թէ բարչի կերպարան մ'առած է, չէր համարձակեր երթիլ որպէս զի թեթև հարուածէ մը չփշրուի։ Երրորդ մը կ'երևակայէր թէ գլուխ չունի. կապարէ գտակ մը դրին անոր վրայ, այնպէս որ ծանրութենէ իր գլուխը գտաւ։ Չորրորդ մը կարծէր թէ մեռած է. ամեն անուեղ կ'մերժէր, առարկելով որ մեռեալները կերակուր չեն ուտեր։ Այդ ցնորքը փարատելու համար իր մի բարեկամը սուտ մեռել եղաւ։ Զանի գագաղի մը մէջ դրին մելամաղձիկ ցնորամիտին առջև և պահ մ'ետք անոր ուտելիք բերին։ Երբ խելացնորը տեսաւ որ իր դրացին կուտէ, անոր օրինակին հետևելով բոյժ գտաւ։ —

Սակայն եթէ կազմական ցնորքը դարման կ'գտնէ, այդպէս չեն մտաւորական ու բարոյական ցնորքն, որ անդարմանելի են, վասն զի հանճարի յատկանիշներն են։ Հանճարի գաղափարը

կ'պատրին և իմացական մտօրուժիներ։ Արդ՝ քանի որ ամեն մարդ կ'փափաքի հանճարեղ լինել, կ'պարտաւորի եթէ իրենէ չուներ այդ շնորհը, դանէ այնպէս երևիլ։ Եւ ասոր միջոցն է դանէ տարին մի քանի անդամ յիմարական բաներ ընել, և խենթերն իրեն անպատասխանատու պիտի ներուի ինչ որ ընէ։ Արդէն գիտես բարեկամ, հայ առածն — Սուտ խենթի եղեր վանքին հաւերը կուտէ։ —

Եւ քանի՛ քանի այդպիսի խենթիներ չեն դանուիր ամեն կարգի, վիճակի ու արուեստի մէջ։

ՇԱՀԱԶՈՒՐ

ԳՐԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՈԳԻ. — Եւրոպական քննադատը ոդին՝ որ մանաւանդ ներկայ դարուս մէջ՝ իր ծայրագոյն կէտը հասած կ'երևի, չի ծագեր ցեղական, կրօնական, պատմական, դրական և այլ խնդիրներ որ իր բոլէն չանցնէ, չգայ և անոր յատակին երբեմն գուտ ոսկի, և առէպ դիրա չդանէ։ Մինչնախական, անպատճառ դրեր, իրր հասարակ այրուրէնի տուներ կարգալ, հին արձանագրեր, միտքներ, դրամներ, պապիրուսներ, չիրիմներ, արձաններ քննել, հանել, վերակազմել և իրենց նախկին դրութեան ու նշանակութեան վերադնել՝ իրր նախապատմական բրածոյք, և պատմութեան վրայ երբեմն լոյս և երբեմն մթին իրերու վրայ աւելի մեծ քոզ մը ձգել, մանկական խաղեր գարձած են կարգ մը քննադատ դիտուններուս համար, որոց մի մասն՝ նոր ու հին ժողովրդոց մէջ ազգակցականն, լեզուական, պատմական առնչութիւններ դտնելու և համեմատական դիտութեանց հիմը դնելու հակամէտ, իրաւ՝ ըզդալի ծառայութիւններ մատուցած են և կ'մատուցանեն մարդկային մտաց զարգացման և մի շատ մը իրր կարծեաց ջնջման մեռնատէ դտնուած են։ Իսկ ամենք ոչ ինչ կանգուն չեն ձգած իրենց մանրակրկիտ ու բծախնդ իր բանաքննութեամբ և ամեն ինչ շատ բարակ մաղէ անցուելով, չորս դին միայն թեփ, փուչ ու աւերակ սփռած են միշտ ճշմարտութեան հասնելու անդուլ եռանդէ մղուած։ Եւ եւրոպացի քննադատներ բնաւից անտես չպիտի լծորին և արևելեան աչխարհն, քաղաքակրթութեան այս վաղեմի օրրանն, և հին աղբերու դամբաններն, բադիններն, փլատակները ու նուիրական մասեաններըլոյս ածելու համար ոչ դիտութիւն, ոչ դրամ, ոչ յոդնութիւն ու զոհաբերութիւն պիտի խնայեին։ Եւ այս է պատճառն՝ որ արդի հնադէտն ու պատմագիրն, բնագէտն ու բանասէրը, դրա-

մագէան ու պրասէրն չատ աւելի հմուտ, չատ աւելի ներդաշն են բազմադիմի հին սովորութեանց, բարուց, հիմնարկութեանց քան այն ազգերն ու պատմաբաններն որ այդ հնամի միջավայրին մէջ կ'ապրէին։

Ի հարկէ՝ անտես չպիտի առնուէին և հայոց պատմական կեանց ու քաղաքակրթութեան այլ և այլ հանգամանքն, և եւրոպացի իմաստասիրին ու քննագատին ուշադրութիւնը պիտի դրաւէին։ Այսպէս թէ գերման, թէ ֆրանսացի և թէ անգլիացի հնախոյզներ, որչափ որ գիտական չափը, նիւթական պիւրեղութիւններ կ'ներկէն, ձեռք առին մեր առնչային պատմութիւնն, պրականութիւնն ու լեզուն և երբեմն հիմնական, երբեմն ենթադրական ծանօթութեանց վրայ՝ մերթ ուղիղ և մերթ կռմայական եզրակացութեան հասան, այնպէս որ թէև ամենք քաղաքակրթութեան մի սարին աստիճանին վրայ մեզ անձուկ տեղ մը տալու պատրաստ չենք մ'իրրև խախուտ ու անկայուն, չենք մ'որ, որքան անշուք, գարերու ընթացքին մէջ իր գիրքն ու կարևորութիւնն ունեցած է, և մի քանի դրչի հարուածով գայն տապալելու և հիմունքն իսկ անհետ ընելու յաւակնութիւնը, գիտուններու կողմէ, ոչ միայն անհեթեթ ձեռնարկ մը, այլ և ծանր վէրք ու արժանապատիւ անպատուութիւն մ'է առնչային ինքնասիրութեան համար։

Հայոց գիտական քննադատութիւնը մարգու և ապրի, տեղւոյ և գարագայի մէջ խարուելի չէ՝ներ, անաչառ գատաստար մ'է որ անխնայ կ'զարնէ մոլորութիւնը, սուտիւնն ուր որ գտնէ։ Ատոդ է այս, միայն չատ անգամ կանխատես դրութեան մ'առնէն բան վերագծելու համար, հաւանականը թէականին, ճշմարիտը սուտին կ'գոնուի և ասկից ծագած է ու կ'ծագի մի և նոյն խնդրոյ վրայ այլ և այլ գիտուններու տարաձայն տեսութիւնները։

Այս քննագատական ոգւոյն անհաճո չպիտի մնային և մեր միջ անոնք որ մէկ կողմէ գերմանական մանրակրկիտ և խորագնին իմացականութեան հետ չափան միջ, միւս կողմէ հայ ազգին նորութիւն ու հեղինակութիւն մը բերելու փառասիրութեամբ, իրենց առաջին և առիթագական գործը կ'համարէին քար ու քանդ ընել ինչ որ կանգուն կր, և առէջ ծեծուած և անլոյծ մնացած խնդիրներ արագրել։ Անոնց այս չափան ու ետադնդեան արգասիքն են այն պատմական, հնախօսական քննագատութիւններն որ վերջին ժամանակներս լոյս տեսան մեր հրատարակչին վրայ, այն գովելի այլ առէջ յանդուգն տեսութիւններն հին տաճարին կենաց վրայ, որ մեծ մասամբ արեմտեան անորոշ, եննիագրական հետազօտութեանց արմագանքն էին, և աղօտ լոյսերու հետ հանրային մտաց ծանր սղղորութիւն մը կ'բերէին։

Չարկ չկայ անուանել այն Հայ բանագատներն որ քննագատական այս ճիւղը մշակած են և պատմական անպատանին

մէջ աւելի փութ ու տոհմակ գտնելու, աւելի ճահիճներ ու մըռուաններ որոնելու նկրտած են քան կենսատու ծաղիկներ ու վճիտ վտակներ։ Մեր հին արձանագրութիւններն անշուշտ կիսակատար, թերի, տակաւ անորոշ մէկ ժամանակագրական, մէկ տեղագրական, մէկ նկարագրական ու չարաբերական տեսակէտով, աւելի ևս թերի ու անկատար նկարագիր մը կ'առնեն, երբ յոկ ենթադրական հանգամանօք գտնելու փորձեր կ'լինին, երբ պատմական թուարներն անխոյզ և հնօրեայ արձանագրեր ու նշխարներ կիսափուլ կոթողներու և աւերակներու ներքև թագուն կ'մնան։ Լաւ է հին մագաղաթներ քրքրել, հին ցրչագիրներ համեմատել, մատենադարաններու փոշոյն ներքև թաղուիլ ճշմարտութեան նշոյլներ գտնելու համար, բայց լաւագոյն է արկածից և դիպաց տեսարանները չրջիլ և այդ տեսարաններուն վրայ երբեմն տպրոյ էակներու ձգած գանագան հետքերը քննել։ Ասոնցմէ հետազօտութեանց շնորհիւ գանագան պատմական հմայութիւններ երևան եկած և շատ մութ ու անիմանալի կէտեր լուսաբանուած են, այս պայմանաւ հնար է չինել ինչ որ այժմ անկատար է կամ թերի, և ինչ որ տեսակ մը քննադատութիւն կ'ջանայ կապել չէ մէկ ամբոխ այլ մտածին օգակներով։

ՏԱՌԱՌԱՆ.— Թո՛ղ պատմական քննադատութիւնն, որ այժմ կ'ճարահիւ մեր մէջ և կերպ մը մեծամտութիւն կ'գտանայ, այս վերջին ժամանակներս խնդրոյ նիւթ եղած է նաև Հայ լեզուի ու ծառերու ծագումն։ Հետաքրին ու հմուտ գրիչներ, Հ. Սարգիսեան, Հ. Պարանեան, Տ. Յարութիւնեանց և Տ. Տաղաւարեան մանաւանդ գրաւածներով կ'ջանան ցոյց տալ մէկ ինչպէս հին լեզուն կազմուեր, մէկ ի՞նչ ցեղային առնչութիւններ ունի, և մէկ բարբառներու ո՞ր դասակարգին կ'պատկանի։ Պ. Յարութիւնեանցի գործը մանաւանդ՝ որ Ռշմիրեան մրցանակի արժանացած է, արդարև հմայիչ և քնարի առաւելութիւն մէ բանասիրական։ Ոչ նուազ ուշադրութեան արժանի է և Պ. Տաղաւարեանի գրքոյկն, որու մէջ ծառերու ծագման, պատուելեան ու կազմութեան մասին գանագան հայացքի ու օտար հեղինակներու կարծիքը մէջ բերելէ ետք, իր յատուկ ուսումնասիրութեան արգիւնքն ևս կ'արձանագրէ այդ կնճռոտ խնդրոյն լուծման նպաստելու մտօք, և կ'կարծէ ճշմարտութեան հատած լինել։ Ներհուն հեղինակն իր եզրակացութիւնն այսպէս կ'դնէ գործին Ցառաջաբանին մէջ.— «Վերջապէս հատատուածեան ենթադրութիւնքս հատայ այն եզրակացութեան մէջ՝ գանիլեան դրերն փխենիկ տառերէ ծագեալ են, և մէկ այդ տառերով ունեցած ենք մի գրականութիւն որ վերջն կորսուած է քրիստոնէութեան ի Հայս տարածմանն առթիւ։ Իսկ գալով գանիլեան այբուբենի վրայ յայելուլ գրեթուն՝ հաւանականապար նոցա մեծ մասն ի Պարսից առնուած են, որոց լեզուն ունի մերինին հնչուածներն, և որոց այբուբենի մէջ

կը գանուին այդ գրերու արժէքներն, և մի քանի յԱսբուց» *

Ինչպէս կ'երևի, Պ. Տաղտարեան միչին ճամբով և բանաւոր պատճառաբանութեամբ կ'հասնի եզրակացութեան մ'որ թերևս խրթնութեանց և հրաշալեաց ճոխակն ունեցող բանաւէրներու ախորժելի չիլուի Միայն մեզ հաճելական չիուիր, որ Մեսրոպէ առաջ պանիչեան տառերով յօրինուած հայ գրականութիւնն է պատ- ջնջուած լինի, և անոր և ոչ իսկ մի նշխարը ձգած չիլինի Ս. Լուսաւորիչ, որու վանդալեան դեր մը կ'վերագրուի յանիրաւ եմէ կայ պարմանալի կէտ մ'այս վիճաբանական նիւթին մէջ, Պ. Տաղտարեանի մի քանի լուրջ և պատրուանութեամբ ըրած դիտողութեանց մասին, Հ. Պարոնեանի Ահռելեայ Հանդիսին միջոցու կրակոտութեամբ նետած տոք քերն են։ Հնարան Հայրն, որ միշտ մեծարելի է իր հմտութեամբ և պիտութեամբ, իր սովորական չրջանատար ոճով կ'յարձակի հակառակորդին դէմ, յարձակում՝ որ թէև հին գպրոցի յատուկ, անդէպ կ'իմաս մեզ ներկայ պարագային մէջ։

Եթէ կայ նաև ուրիչ կէտ մ'որ յատկապէս մեր հասկացողութենէ վեր է, այս է թէ տառարանական ուսումնասիրութիւնն, որքան կինճատ և միտքը փչացնող աշխատութեան մ'նիւթարիող խնդիր, ուղղակի ինչ օտար կրնայ լինիլ մեր արդի գրականութեան պարզացման իրաւի՝ բանասէրներու լեզուաբանական քաւդին մէջ այլազան տառերու առնչութենանց ուսումը կրնայ շատ շատ բառերու արմատական խրթնութիւններ պարզել, բայց մեզի գործնական օգուտ մի՞ն լեզուի մը բարեփոխման, լեզու մ'որուն մի շատ տառերու հին ու նոր տրնչումներն անգամ՝ մեր վարանդի կացութեան մերմամբ՝ զգալի և անհրաժեշտ տարբերութիւններ կ'ընծայեն։ Եթէ խնդիր լինէր մեր արդի տառերը կատարելագործել, անհեթեթ խնդիր, թերևս այդ չափ ծանր աշխատութեան բեռը ներելի համարուէր։ Գիտութեան ճգուռնք լաւէն լաւագունին հասնելու նպատակ ունին։ Պարերու յաջորդական չրջաններուս մէջ եթէ տարրական գիտութեան կանգնած չէնքին նորագոյն քարեր կ'բերուին, այդ չէնքն կարելի եղածին չափ հաստատ, օգտակար և հանգստաւէտ գործելու նպատակաւոր է։

Պ. Տաղտարեանի սուր միտքին ու խոր գարկու ոգւոյն համար ասելի արգասաւոր գաշտեր չեն պակսիր, և հաւանական է որ դերև չգիտի հանէ իր բուժական ծանր արհեստէն կորցած ժամերն ուղղակի ժողովրդեան մտային ու բարոյական յառաջացման համար նուիրելու յոյսեր։

ՍԿՊՈՒՌ

---

* Փափաքելի էր որ Ազգիս բանասէրն որ դարուս՝ նոր մարդն է եւ ամեն յուսաւոր գտագիտութիւններու պաշտպան՝ ճոյնպէս նոր ու բնորոշիչ գուռ տնայ, այս է բուն աշխարհիկ լեզուով, յօրինէր իր գրքին որպէս զի իր ճշմարտութիւնն հասկացողի մնար։

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՇՈՒՐՋԸ

. . . Խմբագիր,

Մեր առանին գործերու մակերեսը չատ անդորր է։ Ըստ երեւոյթին՝ հանդարտիկ կ'աշխատին ժողով ու խորհուրդ և առաջնորդական, տնտեսական ու կրթական խնդիրներ անչուշտ կ'անօրինուին։ Գործ, արդիւնք և ոչ չատ խօսք, այս լինիլ կ'երեւի մեր Վարչային մարմիններու նշանաբանը։ Պաշտօնատուն, գործոց հիւանդանոց թաց են և կ'քալեն, բայց ի՞նչպէս, այդ քաջ չդիտեմ, այս գիտեմ կամ գէթ կ'իմանամ որ չարժիչ ոյժը, զսպանակը, հեռվեռէ կ'մուծուի։ Ընդհատողի հաստատակամութեան խնդիրը տագնապ կ'պատճառէ, տագնապ՝ որ նախորդ վերջումներու և ձախող պարագաներու հետեւանքը կըլլանան լինիլ և մեզ ենան անչարժութեան դատապարտել՝ եթէ անմիջական նորոգութեան մը չձեռնարկուի։

Այս ձեռնարկին համար թերևս անցեալ տասուն 30 ին նոր Գաւառական ժողովն իր ֆ) նիստը կազմեց, ա) նիստը 1895 Սեպ. 11 ին կազմելէն ետև։ Միջոցը կարճ չէ, վեց ամիս, և իսկ՞ը այդչափ երկար այդ ինձ դաղտնիք մ'է։ Կարելի է թեմական ելեւէջներու ընթացքեամբ ժողովին ամբողջացնելու դիտաւորութիւն կար։ Բայց ժողովը իր ֆ) նիստը կ'ընէ առանց և ոչ մի թեմական երեսփոխան իր ծոցն ունենալու։ Թերևս հրաւիրագրերը ճամրան մոլորած են, կամ թեմականները պատուիրակի պէտքը չեն զգար։ Ինչ որ է՝ ճաշակի խնդիր, դժուարալոյծ։ Այն նիստին մէջ գիւանը կ'կազմեն։ Տեղը Լ. Պալեօղեան Ա.Փեհնապէտ, Մ. Մերկերեան, դեբ – Ա.Փեհնապէտ, Մ. Սիմոնեան, Ա.Փեհնապէտը, Վ. Պալասիզպանեան, դ-եբ – Ա.Փեհնապէտը։ Եւ իրօք՝ խնդրոյ կարգը մէկ հատիկ էր, Ընտատոյցի խնդիր, որու նկատմամբ՝ վարչութեան կողմէ կ'ներկայի նամակ մը՝ Պննիչ յանձնաժողովի և Տնտեսական խորհրդոյ երկու Տեղեկագիրներու հետ, որոց տակաւ օրինակներն կանխաւ երեսփոխաններու յղուած են եղեր ի նկատառութիւն։ Այդ տեղեկագիրներու վրայ չեմ կարող մի բան ըսել, սա միայն պատճառաւ որ տակաւին չտեսայ, քանի որ ժողովին ընթացքը միայն դեպերելու վրայ եմ։ Հետևաբար դրսէն լուսած չշուկներուն նայելով՝ նախ՝ Ս. Նախագահը կ'բացատրէ Պննիչ Յանձնաժողովին

ակնարկած կարգ մը դրամական դեղձումներուն դէմ՝ որ իրեն կ'վերագրուին, առարկելով թէ՝ վարչային պարծեր իր վրայ ծանրացած ժամանակ ամեն ինչ կանոնաւորութեամբ անօրինած է, և թէ արդարութիւնը կ'պահանջէ որ Մանախուժի մը կազմուի և ամբաստանութիւնները քննութեան առնուին։ Այս բողոքագրին ընթերցումէն ետք՝ որ կէս ժամ կ'տեւէ, Ս. Նախագահը ժողովէն կ'մեկնի։

Ժողովն՝ այս առաջարկի մասին թէ ու դէմ կարծիքները փոխանակելէն ետև՝ Ատենապետին պիտոյութեան կոչմը կը հանի, այսինքն ատիպողական խնդրով զբաղիլ, քանի որ կ'ըսէ նա, օրակարգն այդ կ'պահանջէ, քանի որ եըմնից վիճակն այնքան ցաւալի ու տխուր է որ անմիջական դարմանի կ'կարօտի, այնպէս որ եթէ մի քանի տարի ևս այս կերպով ընթանան գործերն անտարակոյս հարկ պիտի տեսնուի վարժարան ու հիւանդանոց փակել և Ազգ. կալուածներ վաճառելու բռնադատուիլ։

Անշուշտ բանաւոր էին Ատենապետի դիտողութիւններն, որոց վրայ ժողովն այլ և այլ դրամական դարմաններ կ'առաջարկէ, Ելմտացոյցը կանոնաւորելու և Ազգ. արկղին վարկը վերահաստատելու համար։ Սմենէ աւելի ուշադրութիւն դրաւեր է Տ. Յ. Չարենցի փոխառութեան առաջարկն, որով կարելի ցոյց տուեր է ոչ միայն ատիպողական պարտքեր վճարել, կալուածոց նորոգութիւններ ընել, այլ և տաս տարուան մէջ փոխառութիւնը գոցել։ Ժողովն վերջնական որոշում մը չէ ըներ, միայն ազգ. կալուածական վիճակն ու եկամտից աղբիւրները քննել տալու մասը անօրէնութիւն մ'է ըներ։

Հաւանական է, որ այսպէս լրջօրէն նկատողութեան առնլով արկղին ծանր վիճակն ժողովն գործնական կարգ պարզութեան մը յանգի։

Ընդհմ դեռ ևս պրելիք թէ Ազգատոհմիրաց Ընկերութեան, թէ Հիւանդանոցի և թէ Հայ Ընթերցատան վրայ, որոնք 1895 չրջանի Տեղեկագիրն նոր հրատարակուեցաւ, բայց որը տարաժամ և թուղթս լեցուած լինելով՝ կ'տպագրւիմ աւելի ժամանակի թողուլ պրելիքս։

ՍԻՄԱՒՈՆ։

ՏՊԱՐԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԱՅ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԲ

Ա ՄԱՄՈՒԼԵԱՆ

Գահերէկան արժէք

Զատիկ (Վ. Օլիվէր) 5
Ֆիլտին (պատառ)
Միքրօ-Մագազա, ժան և Բօլէն, ձևրմակ ու Սև (Վ. Օլիվէր) 4
Վերմէր (Կ. Օլիվէ) 8
Մանասեանի ազգերին (Տ. Պատճն) 3
Յեվրէյի սափրիչը (Պոմարշէ) 3
Փաղտիք Խարիպի (Լօժէն Սիւ) 8 հատոր . . . 96 50
Հազար ու մէկ գիշերներ 6 » . . . 74 50
Երեք Հրացանակիրք (Ա. Տիւմա) 3 » . . . 36
Բանն տարի ետք » » 4 » . . . 46 50
Պրաժլօն պերիտա » » 12 » . . . 115
Ամօրի » » 16 50
Իվանհէ (Վ. Ագօթ) 3 հատոր 29
Անիծեալն (*** Ապաց) 4 հատոր 38 25
Ամուրիի մը երազները (Ալ. Մարվէլ) 6 50
Աչխարհի չորքանն ութնուն օրուան մէջ (Ժ. Վէրն) (պատ.)
Խորհրդաւոր կղզի (Ժ. Վէրն) 3 հատոր . . . 28
Մանկիկը (Շ անվէօր) 9 25
Ինպերիալտանի մը Յիշատակը 8
Համառօտ պատմ. Ընտանի գիտութեան (Ա. Պարվէյ) . 10
Մանր վէպեր ու պատեր տղոց համար (պատառ)
Բանաւոր հայերէն շարադրութեան Բ. տէպ . . . 3
Գիտելիք ու պարտիք տղոց Ե. տէպ 5
Ընդհանուր պատմութիւն համառօտ Մաս Ա. . . 5
» » » » Բ. 11 25
» » » Հատոր Բ. 15 75
Առաջին Ընթերցարան 2
Երկրորդ ընթերցարան Ե. տէպ 2 50
Տաննէն գուրս թափեցաւ 5
Իրաւանութիւն Բ. տէպ 5
Առողջարանութիւն տղոցանց համար 5
Արևելեան Մամուլ 24 տարուան (1871–1894) . . 1300
Նարտան Նռոտ (Օնէ) 5
Բերուպակ (Գորտէն) 3
Ատանին Տնտեսութիւն 8

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ա. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Թիւրքիի համար	տարեկան	3 1/2	արծ. ֆրէնք
» » Վէցամսեայ		2	» »
Ապր. վարժապետներու	»	2 1/2	» »
Ա. Պօլսոյ եւ Փորր Ասիոյ	»	4	» »
» » »		2 1/2	» »
Ապր. վարժապետներու	»	3	» »
Ռուսաստանի համար	»	8	րուպլի Ըղդրամ
» » »		4	» »
Եւրոպայի »	»	12	ֆրանք
» » »		9	»

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Ո և է նամակ, յօդուած ու գրուած ուղղեալ խմբագրութեանս առ չեն դարձուիր։

Ա. Մամուլ կ'հրատարակէ նաև ձանձացածներ չափաւոր պայմաններով։

Հասցէ

Մ. Մամուրեան
խմբ. Տնօրէն Ա. Մամուլ ի ՍՄԻՒՌՆԻՒ

M. Mamourian
Rédacteur de la Revue
« Arévélian Mamoul » SMYRNE

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՏԱՐԵՑՈՅՑ
1896

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՆՇԱՆ Ա. ՊԱՐՊԵՐՅԱՆ
Կ. ՊՕԼԻՍ

Կ'գտնուի Պոլիս Պէրպէրեան տպարանն, Խոքի Զապտիէ Ձուտաէսի, Թիւ. 61։

Զիւռնիա — Կեդրոնատեղի Մամուլեան տպարանն։

ԳԻՆ 6 ՂՐՈՒՇ